

Բաժանորդագին ԿԱՆԻՍԻՆ՝ Թուրքիոյ Համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոջմ կ'ընդունուի՝ 1 զրշ-նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Ս.Ո. Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՒՆԱՆ Գ. ՓԱՂԱՍՏԵԱՆ
Պոլիս, Պակէ-Գարու, Թաշխան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند

ه نومروده « زايگيك » غزتيه سى مديرى

بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 33

Շ Ա Բ Ա Թ

30 ՄԱՅԻՍ 1892

ԱԶԴ «ԾԱՂԻԿ»

Կը խնդրուի «Ծաղիկ» բաժանորդագրութենէ պարտք ունեցող մեր գաւառացի բաժանորդներէն՝ վճարել ընդ փոյթ:

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ

Հեղինակ՝ Օգրավ Ֆեօյիէ

Թարգմանիչ՝ ՄԻՀՐԱՆ ԹԵՂԵԱՆ

Իգական սեռի դաստիարակութեան սահմանեալ սոյն բարոյալից իմաստասիրական վէպ, որ ԾԱՂԻԿԻ մէջ մաս առ մաս հրատարակուեցաւ, մաքուր թղթի վրայ տպագրեալ կը վաճառի ի Գին 10 զրշ, իսկ ԾԱՂԻԿԻ բաժանորդաց համար 8 զրշ: Գաւառներէ մէկ դահեկան աւելի պէտք է զրկել թղթատարի ծախուց համար:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

Գ.

ՄԵԾ-ՀԻՒՆՔԵԱՐԱՅԵՆՏԵԱՆ ԲԵՀՆԵՆՆԵՆ

Հայր Տէր Յովնանէս Աւագ Քահանայի Հիւնքեարայէլեցեան

Օտար զարդանուան կիրառութիւնը Հայ դրողաց մէջ կարծուածին չափ նորութիւն մը չէ՝. Յակոբ Մելիք Տէր-Յակոբեանէն չսկսիր. հայկական պաճուճեալ անուններ՝ Վեներտոյ վարդապետներէն սկսեալ միշտ եղած են ու կան. Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունին կ'ստորագրէր Առանց-Սիսական, Զախախեան Հ. Մանուէլ՝ Վահրամ Ռուբինեան, Հ. Եղիա Թովմաճան՝ Անդրէիոս Սիւրբի, և Հ. Ալիշան՝ Նահապետ, և այլն:

Հեռու ժամանակաց մէջ տեսնուած

ու գտնուած են ամէն դասակարգի վերաբերող ազգային հեղինակներ կամ աշուղներ, որք այլազան ծածկանուանց ներքեւ քօղարկեալ՝ իրենց ազգային կնտնտոցը նոյնաման ոճով տաճկարարաւ թրթուացուցած են թէ՛ աստ և թէ՛ ի գաւառու:

Ասոնցմէ ծանուցեալներն կամ մեր յիշողութեան տակ ինկածները կը դասակարգեմք:

Նիհաւի (Նալեան Յակոբ պատրիարք):
Թալիայի (Յովհաննէս Եպիսկոպոս):

Իսէվի (Պէրպէրեան Յակոբ վարդապետ(1):

Հայաթի (Բարեբոգի Միքայէլ(2):

Բէմգի (Եգեստայի Տէր-Յակոբ):

Կիւթթի (Պոլսեցի Սարգիս Զ. Գաւառաշահ):

Մէվզուցի (Կեսարացի Պետրոս):

Պահարի (Պոլսեցի Գրիգոր):

Իւրեանի (Պալքեանցի Հաճի-Գէորգ միականի(3):

Սափի (Եւդոկիացի Հաճի Սերովբէ):

Նամի (Պոլսեցի Յակոբ):

Խափի (Իսկիւտարցի Սալիկ):

Պիսարի (Միհրան Արապաճեան):

Բըզլը (Սապիւղցի Յակոբ):

Զիւլայի (Պոլսեցի Պաղտատար):

Սէրվէրի (Պոլսացի Գրիգոր):

Ֆէրիսի (Պոլսեցի Ռէթէոս):

Ճիւսայի (Պոլսեցի միւսարէճի):

Զիւնիա (Տէր Անտէաս Մաղնիսացի ի Պոլսու):

Վէտիա (Սամաթիացի Ռուբէն):

Շափիա (» Սարգիս, ճէզվէճի):

(1) Հոգեւոյս և վաղաժաման Իգնատիոս Պատրիարքի հոգեւոր ծնողն ու Պաղտատեկեղեցւոյ երբեմն քարոզիչն է: Պէրպէրեան վարդապետի դամբանական արտասանած է ի Բերա Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ՝ քաջաբարոյն Շահնազարեան Կարապետ վարդապետ:

(2) Սա նուագած է ի ներկայութեան Սուլթան Մահմուտի:

(3) Կարծողներ ալ կան թէ՛ անունը Գրիգոր է և ոչ Գէորգ:

Ակեանի (Իսկիւտարցի Հայ ոմն):

Լիսանի (Երզնկացի Հայ ոմն):

Նաքըզը, Նազիրի և այլ ազգային անծանօթ մնացած կարգ մը աշուղներ ու երգահաններու անուններ կան, որոց չարքն երկարաճիգ պիտի լինի:

Իսկ մեր խորագրեալն է՝ Սիլիսի, որ Պաղտոցի Տ. Յովհաննէս քահանայ Հիւնքեարայէլեանէն է, այսինքն հայրըն Արթ. Տ. Յովհաննէս Աւագ-քահանայի Հիւնքեարայէլեանէն:

Մեծ — Հիւնքեարայէլեանէն լինելով որդի Բարեբոգի Զրկիր-Դաւիթին, սորա արհեստին անուամբ նախկին մականունն՝ Սափայեան յորջորջուած է:

Զրկիր-Դաւիթ (1) Գարակէօմրիկի մօտերը՝ Չարչամայի կողմերը բնակութիւն հաստատած է եղեր, ուր երբեմն հաստատած է ին Կ. Պոլսոյ Հայ գաղթականութեան նահապետը: Իւր բնակարանն անդ դեռ կը մնայ՝ կ'ըսուի՝ կանգուն:

Հիւնքեարայէլեանի աշխարհականութեան անունն եղած է Սերովբէ, որ իւր ցեղին մէջ ժառանգական անուն դարձած է գողցես շուրջ երկու դարեր, ինչպէս Տէր-Յովնանէս քահանայական անունն եկեղեցւոյն նշանաւոր յաջորդութիւն մը՝ այս նահապետական գերդաստանին մէջ:

Սերովբէ Սաքայեանի (բուն Հիւնքեարայէլեան) հօրեղբայրն ալ՝ Տէր-Յովհաննէս եղած է, որոյ մեծատաղանդ որդին է՝ արժանայիշատակ և յոգնարդիւն Գէորգ-Դաւիթ Պաղտոցին:

Սերովբէ ի պատանեկութեան, վերջին ծայր մտացի և ընդունակ գոյով, դիւրաւ ուսած է հայերէնն ու տաճկերէնն, աշակերտելով նախ մեծանուն հօրեղբորորդւոյն՝ Գէորգ-Դաւիթին, և ապա թուրքերէնն՝ նշանաւոր թուրք Հօճայի մը քով կատարելագործելով:

(1) Կնքած է սա՝ իւր մահկանացուն՝ 1794 սեպտ. 10ին, ինչպէս մեծ Հիւնքեարայէլեանի մայրն՝ Տիրուհի-Տիրին՝ վախճանած է 1803 Ապրիլ 14ին:

Սերովբեի ութ տարեկան էր, երբ իւր հայրը՝ Զրկիր-Դաւիթ՝ ատաղձավաճառի մը քով աշակերտութեան տուած զնա, ի Պալատ, Վարպետն էր Յակոբ Պատրիարքին հայրը, Սիւսանի-Օղլու Սերովբեի (1)։

Փոքրիկն Սերովբէ ուրջափ ալ արհեստի տրուած էր, բայց բնաւ չէր կասած իւր նախասիրած տաճկերէն գրագիտութեան մէջ հսկայաքայլ յառաջանալու։

Սերովբէ խիստ մտերմութիւն ունենալով նախկին Մեծ-Եպարքոս Ֆուատ փաշայի հայր Իզզէթ-Մուլայի(2) հետ — որ իւր ժամանակին ամենէն համբաւաւոր ու նշանաւոր թուրք բանաստեղծներէն մին նկատուած է — շատ կ'օգտուի նորա ներկուած տաճկագիտութենէն, Իզզէթ թաղուած է ի Սըվազ։

Չմոռնանք յիշելու, Սերովբէ Սաքայեան, կամ լաւ ևս բուն Հիւնքեարպէյ՝ չնտեան, թէ՛ աշխարհականութեան և թէ՛ քահանայական շրջանին մէջ՝ բազմաթիւ տաճկերէն քաւիւններ և նկարագիրներ յօրինած է զանազան երեւելի անձանց նկատմամբ, ընդ որոս գրած է Իզզէթ-Մուլային քաւիւնը, Վարպետ-Ամիրայինը (Պէշքեան), Տիւզեան գերդաստանի գլխաւորներունը, և ըն, որոց մէկ մասն ցարդ կը մնայ Հիւնքեարպէյ չնտեանի թուներէն՝ Դամիկ էֆէնտիին և մէկ մասն ալ՝ ուրիշ թուանը՝ Բարթիկ էֆէնտի Հիւնքեարպէյ չնտեանի քով։

Այս առթիւ աւելորդ չեմք համարիր յայտնել թէ՛ Աւսարիոյ Ֆէրաիսանա Առաջնոյն կայսրուհւոյն համար մայրաքաղաքէս զրկուած է ծանրագին և սակահոռ արեւելեան շրջագրեալ մը, որուն երկայնատուտն քղանցից եզերքը Տաճկերէն սրամիտ պէյիքներ հիւսած է Սերովբեի. այդ պատմական շրջագրեալ մինչև ցարդ պահուած է մեծ խնամօք Վիէնայի կայսերական հնութեանց թանգարանին մէջ, իւրեւ թանկագին արեւելեան ձեռակերտ ճոխ հրաշակերտ մը։

Պզտիկ Սերովբէն, գամ քան զգամ փորձով իւր գործունէութիւնն ու յառաջադիմութիւնը ցոյց կ'ուտար ատաղձավաճառութեան արհեստին մէջ ի Պալատ, վերոյիշեալ խանութն՝ որ սահ-

(1) Վարպետն և աշակերտն համանուն լինելով, առաջինը կ'ըսուի եղբոր Պէյլիւք-Սերովբէ, երկրորդը՝ Բիւշիւք-Սերովբէ։

(2) Սորա իւզաների և մեծագիր պատկերն տեսած եմ երիցս ողբացեալ Ղադարոսեան Քրիստոստուր էֆէնտիի քեռորդուոյն՝ ճարտար պատկերհան Եսզըճեան Սիմոն էֆէնտիի գեղարուեստական դահլիճին մէջ։

մանուած էր Ազգին ապագայ գրական ակումբը կազմելու մի օր։

Խնայողութիւն սիրող էր Սերովբէ պատանին, և շաբաթականները չէր ուտեր, այլ կուտար վարպետին քով ի պահ։ Այսպէս՝ բաւականին դրամաւելցուցած էր, օր մը դրամաւելու շինելու համար։ Նոյն փափաքն ունէր նաև վարպետը. կ'ուզէր որ իւր շնորհիւ մարդ լինի Սերովբէն։

Սերովբեի հայրը՝ Զրկիր-Դաւիթ 200 դրուշի պարտք մը կ'ունենայ, զոր մինչեւ այն ատեն ծածկած էր տղէն։ Օր մը տուն վերադարձած ատեն կը ձերբակալուի և բանտը կը դրուի։ Դաւիթ բանտէն լուր կը յղէ զաւկին որ զինքը գայ ազատէ, միանգամայն յայտնելով որ 200 դրուշ պարտք ունենալուն պատճառաւ բանտարկուած է։ Սոյն պարտքը գոյացուցած էր իւր աղջիկը, այսինքն Սերովբեի քոյրը, ամուսնացուցած ժամանակ։

Սերովբեի վարպետին կը յայտնէ հօրը գլխուն եկած փորձանքը, և կը խնդրէ որ քովը աւելցուցած դրամէն երկու հարիւր դրուշ մը վճարէ։

Վարպետ-Սերովբէն մեծ դժկամակութիւն ցոյց կուտայ առ այս, առարկելով թէ՛ ծնողները ընդհանրապէս իրենց զաւակներուն սիւլիւկն եղած են, ծըծել և քամել կը սիրեն միշտ զաւտկացը դրամը։

Սերովբեի սաստիկ կ'զգածուի՝ հօրը դէմ եղած այդպիսի ծանր ակնարկութեան մը համար, և «վա՛յ, դո՛ւք Պապայիս բան կ'ըսէք կոր» միթմրթալով, կ'առնէ կը քալէ խանութէն։

Վարպետը կ'սթափուի, կ'ուզէ մըտացի աշակերտին հետ ինքնին իրաւախոհ լինիլ և հաշտուիլ, բայց անհնար կը լինի։ Օրեր կ'անցնին, բայց այս հաշտութիւնը գոյացուցելու համար մեր ազգէն միջնորդութիւն ընող աղդեցիկ անձ մը չգտնուիր։

Խանութին յաճախորդները միշտ կուգան՝ Սերովբեի կը հարցունեն, Սերովբեի կը փնտեն։ Ասոնցմէ մէկը, ազնիւ Տաճիկ մը, Ծովային Նախարար Թահիր փաշային աները Շիրիաճի-Լաթիֆ աղան, կ'իմանայ գործը և կը խոստանայ հաշտութիւն ընել տալ։ Կ'երթայ կը գտնէ զՍերովբեի և կը համոզէ որ հաշտուի վարպետին հետ։ Կ'առնէ խանութը կը տանի, ուր աշկերտը վարպետին ձեռքն համբուրելով, և վարպետն աշկերտին ճակատը, հաշտութիւնը կը գոյանայ։

Սիւսանի-Օղլուն՝ Սերովբեի սիրտն առնելու համար կ'ըսէ. «Օղլու՛մ, ես ինչ որ ըսի, հօրդ հագարէք ընելու մտօք չըսի. վճարելու համար ցոյց տըռած դժկամակութիւն» նոյն խոսքով

ապագայ բարօրութեանդ համար էր, և այլ այս կերպ միթարական խօսքեր։

Ինչ և է, Սաքայեան վերահաստատուելով գործին մէջ՝ ոգեւորութեամբ կ'աշխատի, որով այնչափ յառաջ կ'երթայ՝ մասնաւոր պաշտպանութեամբ յիշեալ Լաթիֆ աղային, որ Սերովբեի վարպետին թէ՛ տունը և թէ՛ խանութը՝ բոլոր պարունակութեամբ կը գնէ դիզած դրամներով ու մասնաւոր փոխատուութիւններով։

Ինքնօգնութեան հրաշքն հետզհետէ ընդարձակելով, Սերովբէ օրին մէկը բոլոր պարտքերը կը վճարէ, և յառաջանալով միշտ՝ ատաղձագործի խանութն անբաւական կը լինի ունեցած ապրանքները զետեղելու, և կ'ստիպուի՝ ուրիշ միջերանոց ալ վարձելու։ Իւր գործակատարն էր Սամաթիոյ Ս. Դէորդ եկեղեցւոյ Շահպազեան Տ. Յովհաննէսի հայրը՝ Յարութիւն։

Յայտնի է որ, հին ատեն ատաղձի նաւերն երբ ապրանք բերէին, դրամն կանխիկ չէին ստանար, այլ յառաջիկայ աշնան կամ հետեւեալ տարին կ'ուզային գանձելու։

Սերովբեի գործերն այն ինչ սոյն ատիճան արագ յաջողութեանց մէջ կ'ընթանային, յանկարծ Վերացման Ս. Խաչի տօնի մը գիշեր, Հրէից Դամիթ Պարեամի առթիւ՝ համաճարակ մեծ հրդեհ կը պատահի, և այրացաւեր կը լինին դրեթէ համայն Քիւրէմիք-Մահալլէսին, Ֆէնէր, Պալատ և շրջակայ թաղերն, որոց մէջ նաեւ Սերովբեի նոր գնած տունը, խանութը և ամբողջ ապրանքներն։

Սերովբեի այն ինչ յուսահատ՝ տըխուր և մեղամաղձոտ կը մտածէր, թէ այսուհետեւ ո՛ր մէկը պիտի կրնար վերաշինել, խանութը թէ տունը, և թէ ո՛վ պիտի հատուցանէր ատաղձի նաւապետներուն ապառիկներն, այդ անմըխիթար և յուսահատ վայրկեաններուն մէջ կը փութայ իրեն ներկայանալ բարեացակամ Լաթիֆ աղայն, և իրրեւ երկրաւոր նախախնամութիւն՝ կը յուսադրէ զՍերովբեի բնաւ չկասիլ գործելէ, ըսելով թէ, «եկո՛ւր, դիտէ՛, տըզա՛ս, ոս՛ խանութիդ տեղն» և կը ցուցնէ հրկիզելոց համայնացոյց տեսարանը, և կը յաւելու։

«Նայէ՛, ո՛րչափ տունք, խանութներ, շէնքեր միահսղոյն այրած են, գիտցի՛ր որ ասոնց ամէնուն շինութեանը համար ալ քեզսէ՛ պէտք է, քեզսէ՛. մի՛ կենար պարապ, մի՛ տնտնար, օ՛ն անդր։ Մաքրէ՛ աս տեղուանքը, շինէ՛ խանութդ. ես ահաւասիկ կեցած եմ. ուզէ՛, որչափ կ'ուզես դրամ, ահա՛ պիտի դիմանամ քեզի», կ'ըսէ։

Եւ իրօք ալ, Լաթիֆ աղայն արտա-

կարգ վեհանձնութեամբ և ազնիւ մարդասիրութեամբ պաշտպան կանգնելով անարժաթ և տըկլով վիճակի ենթարկեալ Սերովբիկին, և բաւական կըրրիկ դրամագլուխ դնելով ասոր ծոցիկն, շահակից կ'ըլլայ հետը, և նոյն օրէն մեծ յաջողութեան թուական մը կ'սկսի, որով հին վիճակէն աւելի գերազանց գիրք մը կ'ստանայ խանութը, և շնորհիւ Լաթիֆ աղային՝ մինչեւ իսկ արքունի նաւարանին պէտք եղած ատաղձները կը հայթայթեն:

Ահա՛ սոյն յաջողութեանց վրայ է, որ հին վարպետն՝ Մեծ-Սերովբէ (Պէօ-յիւք-Սերովբէ) դուստրը Վերոնիկին կը նուութեան կուտայ աշակերտին՝ Փոքրիկ Սերովբէին:

Սերովբիկ՝ դեռ 28 տարեկան հասակն նոր լրացուցած էր, երբ Յակոբ Պատրիարքի(1) քրոջը՝ Վերոնիկին(2) հետ ամուսնացաւ և տուն-փեսայ գնաց ի Պալատ Թախթա-Միմարէ թաղը՝ երջանկայիշատակ Յակոբ Պատրիարքի ծննդատունը:

Սերովբէ Սաքայեան ամուսնանալէ շետոյ, չորս մանչ և երկու աղջիկ զաւակ կ'ունենայ: Ի կենդանութեան թաղած է առաջին աղջիկն՝ Տիրուհին, և Բենիամին՝ Գրիգորիկ, որոց համար միշտ հոգւոց կը հանէ եղբր:

Իսկ մնացեալներն են Դաւիթ (3), Գեթէն (4), Թադէոս (5) և Տիրուհի (6):

(1) Յակոբ Գ. պատրիարք Սերովբեան երեք անգամ Պատրիարքութիւն ըրած է:

1839ին, մէկ տարի և 6 ամիս:

1848ին՝ երկրորդ անգամ, ութ տարի: 1856ին, վերջին անգամ, 2 տարի պաշտօնավարած և կամովին հրաժարած է:

(2) Արդարեւ Վերոնիկ անունն՝ թէ՛ հին և թէ՛ նոր ժամանակաց մէջ ի Հայս անսովոր անուններէն է. սակայն Պալատու Սերովբեան աղագոտոմին մէջ՝ Վերոնիկ և Թեքեզա իգական յատուկ անուններն յաճախ մուտ գտած են, կնքահայրն կաթողիկ եղած լինելով:

(3) Անդրանիկ որդին՝ պապուն աւնունով Դաւիթ անուանակոչուած է, որ ունի չորս զաւակներ. Ա. Հանգուցեալ Սողոմոն էֆ. առաջնակարգ ճարտար գեղագիր, որ և 32 տարիներ՝ Արտաքին գործոց պաշտօնատան թարգմանչութեան գրասենեկին անդամութենէն էր. Բ. Դամիկ էֆէնտին, որ 1870ին ի Պատրիարքարան 5 տարի, և ապա՝ Ազգ. Հիւանդանոցի գրասենեկին ընդհանուր գործակատարութեան բազմադրաղ պաշտօնը կը վարէ. Գ. Տիգրան էֆէնտին, որ 1886էն յօտէսա՝ Օսմ. Փոխ-Հիւպատոս է. և Դ. Պ. Յովհաննէս, որ մեկուսացեալ կեանք կը վարէ:

(4) Երկրորդ որդին է Գեթէնն, որ ունի երեք զաւակներ. առաջինն՝ Բարթիկ էֆ. որ 1863էն սկսեալ Մայր Եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ քարտուղարութիւնը ստանձնած է, միանգամայն

Առաջին երկուքը մեռած են այժմ, ազնուասուն զաւակներ թողով:

Բուն Հիւնքեարպէյէնտեանի անդրանիկ որդւոյն՝ Դաւիթ լուսանկարն կախուած է Արթ. Տ. Յովհաննէս հօր նստած սենեակը. Իսկ Գեթէնի մեծադիր և ստուերագիր պատկերն՝ զոր գրած է Մեծ Տէր-Յովհաննէսի թուոն՝ ողբացեալ Սողոմոն էֆ, նոյն Արթ. Տ. Հօրը տան ընդունելութեան սրահը դրուած է ի տես:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

(Շարունակելի)

Ի ՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ

ՆՈՒԱԳՆԵՐ

Ձեմ գիտեր կամ չեմ կրնար գտնել թէ Միհրան Յովհաննէսեան գրագիտաց որ խումբին կը պատկանի, հիներո՞ւն թէ նորերուն, քանի որ ատոնց սահմաններն շատ անորոշ մնացած են՝ հակառակ ոմանց ճգնաց ու ջանից. սա միայն ճշմարիտ և ակներեւ է թէ ժողովրդին իսկապէս սիրած, յարգած ու փնտռած բանաստեղծն է Միհրան Յովհաննէսեան, որովհետեւ ուղղակի անոնց սրտին հետ կը խօսի, հասկցած է զայն, անոր հասկցած լեզուով կը գրէ և նա մանաւանդ անոր հասկցած նիւթոց վերայ կը գրէ: Վաղուց խոստացուած էր իւր գիրքը և արդէն անհամբեր կ'ըստպատէր, թէ պէտ լրագրաց մէջ կարդացուած լինէին անոր մէջ գտնուածները: Անշուշտ եմ որ շատեր երբ լրագ-

Ս. Երուսաղիմայ և Ս. Փրկչեան Հիւանդանոցի սեպհական վագրֆներուն ճապիտութիւնը (հաւաքչութիւն): Երկրորդն՝ Եղուարդ էֆ. որ Օսմ. կեդրոնական նամակատան մէջ հեռագրական սենեկին պետն է: Երրորդն՝ Մարտիկ էֆ. որ Սիրքէճիի նամակատան հեռագրատան մասնաճիւղին պետն է:

(5) Զարգիւ Տէր-Յովհաննէս Աւագ-Քահանայ Հիւնքեարպէյէնտեան, որ Առաքելոց թուով զաւակներ ունի, որոց ութն կենդանի են, որք են՝

Լիւնն էֆ. մասնագէտ երկրագործ և վերատեսուչ-պաշտօնէայ կայսերական ագարակաց ի Դուրպաղը-Տէրէ:

Տօքթ. Կոպեռնիկ էֆ. առաջնակարգ ճարտար բժիշկ, վիայեալ Փարիզու համալսարանէն:

Պ. Խաչիկ (գեղագործ՝ ի Փարիզ):

Պ. Դաւիթ (գեղագործ՝ ի Փարիզ):

Պ. Սերովբէ (ուսանող գեղագործութեան ի Փարիզ):

Մնացեալ երեքն աղջիկ են:

(6) Տիրուհի՝ որ մամիկին անուամբն մկրտուած է, և որ այժմ այրիացեալ և անզաւակ է. ձմեռներն՝ Հիւնքեարպէյէնտեան հօրը քով կը մնայ, ամառուան օրերն՝ նոյն գերդաստանի մնացեալ անդամոց քով կը բաժնէ:

Բէ զատ կարգալու նիւթ մը չեն գներ, մեր շուկայի մարդերն ըսել կ'ուզեն, այդ գիրքէն մէկ մէկ հատ պիտի առնեն, որովհետեւ հոն երգուած են իրենց գլխէն անցածները, իրենց առտնին կեանքը, իրենց սիրած անձերը. Եւ անոնք որ ամէն բան կը կարդան, կըրկնակի պիտի կորդան «նուագ»ները՝ անոնց հեշտին հրապոյրովն օրօրուելու և թերեւս անոնց այդ հրապոյրին գաղտնիքը գողնալու համար, սակայն ի զուր պիտի աշխատին, քանի որ Յովհաննէսեանի յատուկ է կարծես ժողովուրդը երգելու ձիրքը: Ինքն ոչ նորերէն է և ոչ հիներէն, այլ ճշմարտիւ ժողովուրդէն է, ուստի իւր գիրքն ալ կարգացողը թող չը խաբուի զինքը հնոց մէջ դասաւորելով, երբ կարգայ մեծանուն եղիային, մեր ամենուս սիրելոյն ուղղուած հետեւեալ տողերն.

Աղնիւ, վե՛հ հոգիք երբ որ տառապին, Կ'երգեն հուսկ մի երգ նման կարապին. Եւ դո՛ւ, Մելանիա, սեւաքօղ քնար, Երգէ՛, երգելիք ես չեմ յագենար:

Եւ ո՛չ ալ նորերուն մէջ խառնել իւր միւս կատրները կարգալով: Ամէն վսեմ զգացումներ ամենէն սովորական բառերով իսկ կը ներկայացնէ՝ առանց սակայն անոնց վսեմութեան, մեծութեան մէկ թելին դաշելու:

Ինչ քաջալերիչ ոգի չպարունակէր մեր աշխատող դասակարգին համար հետեւեալ երկտողը որ «Հինաւուրց զոյգ մը Աղբատիկ թինթիններ»էն կը քաղեմ. Կեցցէ՛, ազնիւ ծեր, աղգիդ ես պարծանք:

Վրայ ձըգոց չես, չե՛ս գլխու փորձանք:

Եւ քանի՞ օն վսեմ կը ցուցնէ ժողովրդեան աչքին պատուոյ նախանձախնդրութիւնը «Նաւավար Գիրգոր»ին մէջ, Ինչ մեծ խրատ է «Շահաճուկի դովապանքը» մեր հարսերուն ու կեսուրներուն համար որք այնչափ խնդրոյ առարկայ եղած են իրենց վարմանց պատճառաւ. Եւ կանացի սիրոյ այն կրկին ուխտը զոր գրած է «Մնանկութեան Արձագանդ»ին մէջ, ո՞ր սէր երգող բանաստեղծը գտած է այդչափ ձկուն, անուշ ու հրապուրալի սիրոյ յայտարարութիւն մը:

Դուն գլխաւորս ես, քեզ սէր ուխտեցի, Ալ ի՛նչ աչք տնկեմ պղտիկի մեծի:

Քեզ հետ ապրելու կը բաւէ չոր հաց, Մազիդ ճերմակին բնաւ չեմ խորհած:

Փոքրիկներէն իսկ պիտի սիրուի Միհրան Յովհաննէսեանի սոյն երկրորդ գործը որուն մէջ «Տանտան»ը պարունակող էջերն անտարտիայ ամենէն շատ պիտի հիննան մեր մանկանց ձեռքը:

Արձակի փոքր նմոյշ մը կայ սոյն գրքին մէջ յորում գրուած պատկերներէն շատ տիրապէցիկ նիւթ մ'ընարե-

լով հանդերձ, այնչափ վեհագի զգացումներ ստացած է անկից, անոր՝ այդ նըմայշին մէջ գերեզմանատունը անցաւոր հանգստարան մը կը նկատէ՝ ապագայի արքայութեան յայտնվելու և կը դիտէ անոնց վրայ գտնուող վեհ մասերը, էն ու աշխատութեան մտաւորականները, և ո՛չ թէ միայն անոնց մէջ պարփակուած որդերն ու սակորները, փոփոխութիւնն ու զարգացումը:

Իսկ այն դիւրատա՛հ ոտանաւորը որ նուիրուած է մեր ազգին մէջ մէկ հատիկ Սրբուհւոյն, ամէն գովեստէ վեր կը համարուի. երբ զայն գովել սկսիմ, ամբողջ ոտանաւորն աստ գնել հարկ պիտի լինի, այնչափ խմաստալի տողերով լի է:

Եւ այն երեք դէմքերը որք իրարու ետեւէ ուսման, կրօնի և որբերու սէրը և այդ սիրոյ վեհութիւնը մինչեւ սրտիդ խորերը կը թափանձեն. Տէմիր-ճիպաշեան, Տէր Գէորգ Արծրունի և Սրբուհի Մայրապետ:

Վ. ԳԱԼԵԱՒՃԵԱՆ

ԾԱՆԿԱՋԱՐԴ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՇՈՂՈՒԹԻՒՆԻԾ

(Նուէր Օգոստոսի քաղաքային Հայրուհւոյ)

Երեքշաբթի երեկոյեան երբ դասերը վերջացնելով բանալից ազատուածի անհամբերութեամբ շտապում էինք վազ տալ մեր տները և հեռու ուսուցիչներին հսկողութիւնից ազատ չունչ առնել, Հայոց լեզուի ուսուցիչը՝ Ստեփան սարկաւազը (1) յայտարարեց թէ չորեքշաբթի ու հինգշաբթի օրերը ազատ ենք...

— Վաղը Մաղկապարդ է, ասաց նա, — իսկ միւս օրը Դրիստոսի Համբարձման տօնն է: Չեմ արգելում ձեզ խաղալ, ուրախ ժամանակ անցկացնել, այլ զգուշացէք վատ տղաների հետ փողոցներում թափառել... նա դառնալով մեծ աշակերտներին, աւելացրեց. — երբ խաղը ձեզ կը ձանձրացնէ, որպէս զբօսանքի փոփոխութիւն, նկարագրեցէք ձեր բոլոր տեսածները: Ու առաջնորդելով մեզ մինչեւ դպրոցի պատշգամբը, երկրորդ անգամ կրկնեց, որ չը մոռանանք իւր պատուէրները:

Այդ օրից տառնեակ տարիներ անցնելուց յետոյ նոյն իսկ, երբ այսօր մըտածում եմ անցեալի այդ յիշողութիւնը

(1) Շրջանաւարտ էմիլիանի ժառանգաւորաց դպրոցի և ուրարակիր սարկաւազ, որ այժմ քահանայ է ձեռնադրուած Օրբազար քաղաքում Օգոստոսի Հայրուհի անուամբ և կարծեմ թեմական տեսուչ է Խրիմու Նահանգի:

ամիսներ և ուրազ ձեռք, ամենից առաջ պատկերանում է աչքիս նոյն Ստեփան սարկաւազը իւր եկեղեցական սեւ ու երկայն վերարկով, նրա չնորհալի և բարձր հասակը, նրա հեզ գրաւիչ դէմքը՝ իւր կէս մտածող ու լուրջ և կէս զուարթ ու մշտածիծաղ գծագրութիւնով. նրա բաց շագանակագոյն դանդուր մազերը, որ փառայել ճակատից դէպի յետ սանտրուած չնորհալի ալիքներով լինում էին ցած, մինչեւ ծոծրակը... կարծես հէնց այս վայրկեան էլ կանգնած է նա իմ առջեւ, լսում եմ նրա մեղմ ու քաղցր ձայնը, այնքան խոր տպաւորութիւն էր թողել նա մանկական ուղեղիս վրայ իւր հեզահամբոյր բնաւորութեամբ:

Հասնելով տուն, գրքերս տեղաւորեցի պահարանի մէջ ու դուրս եկայ մեր պարտէզը, ուր ազատ վազվելով իմ միակ զբօսանքն էր: Որքան գեղեցիկ էր պարտէզը, ինձ թւում էր թէ մայիսը իւր ամբողջ հոգին դրել էր մեր պարտիկի մէջ, թէ ոչ մի հարուստ զարդարանք չէր խնայել սնանկարգելու այդ փոքրիկ կենսաբոյր դրախտը, ուր սէգ ու հպարտ քայլերով պտտելը աշխարհիս բոլոր վայելքներից թանկագին էր ինձ համար: Երբեք երբեք ծաղիկները և անուշաբոյր վարդերը փթթում էին իմ չորս կողմը, օդը լցնելով հեշտալի անուշահոտութեամբ: Խայտարեղէտ թիթեռնիկները, զորանք հալածելու մէջ մեծ բուսականութիւն էի գտնում, իրենց աշտածեւ պիծակաւոր թեւերը բաց ու խուր անելով կարծես ծաղրում էին ինձ: Փոքրիկ մեղունները, անխոնջ աշխատութեան օրինակ այդ փոքրիկ արարածները, թռչկոտում էին ծաղիկէ ցածրիկ և ինչ ազահոտութեամբ ծածում էին նրանց հիւթը: Իսկ իմ գլխի վրայ սաւառնում էին թռչնիկներ, ուրախ ճիչեր արձակելով... եւ տեսնելով այդ բոլորը, իմ մէջ արձածվում էր մի տեսակ բուռն նախանձ՝ թէ ինչո՞ւ ես էլ թեւեր չունի, ինչո՞ւ ես էլ կարող չէի թռչել: Երեկոյեան մեղմ քամին աննշմարելի հոսանքով փչում էր՝ իւր կաղաւթիչ համբոյրը դրոշմելով ծառերի տերեւների ու անուշաբոյր ծաղկանց թաւապատ թիթեռնիկների վըրայ և խլելով նրանցից ամբոսական անուշահոտութիւն, բերում հազորդում էր մեր քթին, ներշնչելով կեանքի մի նոր քաղցրութիւն:

Հայրս իւր հատոցն ու մկրտած առած՝ աշխատում էր պարտիկի մի անկիւնում: Ես շտապեցի նրա մօտ և մանկական ուրախութեամբ պատմեցի երկու օր ազատ լինելու մասին: Նա գլուխ շոյելով նկատեց, թէ այդ քիչ է, թէ իրենք իրենց մանուկ հասակում

աւելի ուրախ էին անցկացնում այդ տօները, թէ բոլոր աշակերտներով, ուսուցիչներով ու ծնողներով գնում էին այգիները, տանելով իրենց հետ և մեծ պաշար: Ապա ասաց.

— Դու յիշեցիր ինձ մանկութեան օրերս և նրանց քաղցր յիշատակները որ անջնջելի դրոշմուած են իմ մէջ: Այն ժամանակ քո նման անհոգ մանուկ էի, կեանքի ճակտորդութիւն ու վշտերը դեռ չէին բաղխել կրծքիս դռները... թէ որպիսի տպաւորութիւն է թողնում մարդու վրայ անցեալի յիշատակների հրահրումն. — այդ դու կ'իմանաս յետոյ, երբ կը մեծանաս:

Արդէն մութն էր, երեկոյեան ընթերիքը պատրաստ էր, որը վերջացնելով, հայրս պատուիրեց շուտ պարկել քնելու: Պարկեցի անկողնի մէջ, Երկու օր արձակուրդ ունէի, այդ միտքը զբաղեցնում էր ինձ: Քունը աչքերիցս հեռացել էր: Անկողնիս մէջ տապակվում էի, կարծես ասեղներ ցանած լինէին, որ հարկադրուած էի միշտ մի կողմից միւսը դառնալ: Իսկ այն անիծեալ ժամացոյցը, Այդ ծոյլ, դանդաղաբայլ առարկայն ո՞րտեղից էր գտել հայրս ու քորչ արել սենեկի աչքի զարկող պատից, որ մի փոքր շտապել ասածդ չը գիտէր, չգիտեր թէ վաղը ծաղկալարդ է ու պէտք է արագ անցկացնել ժամերը ու միշտ միակերպ և յուսահատեցուցիչ թիկթակ, թիկ, թակով աւելի տանջում էր ինձ: Երկար, շատ երկար տեւեց այդ տանջանքը, և չգիտեմ ե՞րբ քունը առաւ ինձ իւր գիրկը՝ միտքս պաշարելով երազային անցքերի ուրուականներով:

Ցանկալի առաւօտը բացուել էր: Մօրըս քաղցր համբոյրները, որ մայրական շրթանց ջերմութեամբ դրոշմվում էին քրտնաթոր ճակատիս ու այտերիս, — զարթեցրին ինձ: Նա վաղօրօք պատրաստել էր ինձ համար ամենանոր հագուստներս, որ Զատիկ օրը առաջին անգամ հագել էի: Իւր յատուկ խնամքով զարդարեց զիս, ամէն անգամ պատուիրելով, որ քար ու հողի հետ չխաղամ: Առաւօտեան թէյը շտապով խըմելով, դուրս եկայ պարտէզ, կարծես տան օդը խեղդում լինէր ինձ:

Ի՞նչ սքանչելի եղանակ էր դուրսը: Շատ տարիներ եմ անկացրել այդ օրից, շատ ծաղկազարդեր են գլորուել դէպի յաւիտենականութեան գիրկը, բայց երբեք այլ եւս չեմ գգայել բնութեան այնպիսի քաղցրութեան, որպէս այդ օրը: Չգիտեմ մայիսի քանիսն էր, երկինքը այնքան սպառ, թափանցիկ էր, որքան հայելի և ես մանկական միամտութեամբ տքնում էի այդ թափանցիկ անհունութեան հայելոյ մէջ տեսնել

պատկերս հասակիս ամբողջ մեծութեամբ։ Արեւի հրավառ գունտը իւր փառայեղ դէմքով լուրձ էր կապոյտ կամարի վրայ, իւր ջերմութեամբ կենդանութիւն տալով ամբողջ բուսական աշխարհին, իւր ոսկեփայլ ճառագայթներով ոսկեգօծելով ամենայն ինչ։ Ինձ թւում էր թէ արեւն էլ մասնակից էր ծաղկազարդի տօնին, թէ նա էլ հագել էր իւր նոր հագուստները, թէ նրա մայրն էլ լուսացել, սանտրելու գուգել էր նրան և բոլորակ հրափայլ թըշերին զոյգ համբոյր կնքելով՝ ճանապարհ էր դրել իւր օրուայ չըջանը կատարելու։ Առաւօտեան զեփիւռի սառն հոսանքը աննշմարելի կերպով փչում էր արեւելքից և բուսականութեան մէջ բեկբեկուելով՝ գալիս չլուրձ էր երեսիս ու կարծես ականջիս անհասկանալի բառեր փրփրոտալով, սլանում էր չը գիտեմ դէպ ի ո՞ւր։ Ծառերի դալար ոստերն ու նորաբողբոջ տերեւները ճղվում էին նրա հոսանքի ուղղութեամբ, դողում, սոսափում էին, յառաջ բերելով մի տեսակ կախարդական երաժշտութիւն։ Այդ երաժշտութեան միախառնուելով բազմաթիւ թռչնիկների աւաշական դալալիկները և վազող առուակի խոխոջանքը — օդը աղմկում էին այնքան քաղցր ու հեշտալի ներդաշնակութեամբ, որ կարծես հոգեբուզիս ալելուներով օրհնաբանում լինէին գեղեցիկ գարուն պարգեւող Արարչին։ Կանգնած եմ առուակի եզերքին, խորին յափշտակութեամբ դիտում եմ թէ ինչպէս դալար ձողունները երկիւղածութեամբ խոնարհում են դէպ ի ցած՝ որպէս թէ մանրիկ ալիքներից գաղտնի համայր խլելու մոքով։ Եւ թւում էր ինձ թէ այդ մանրիկ ալիքները ժպտում էին, ծիծաղում էին իրենց ջրային կրծքի ամբողջ լայնութեամբ։ Ու նրանք արեւի ոսկի ճառագայթներից խլելով կազմում են ոսկեգոյն օձապտոյտ ժապաւէտներ, մանր ոսկեղոյ առուակներ և անհոգ ուրախ աղմուկով վազում են, միմեանց հրելով, միմեանց գաւակ թռչելով, կարծես նրանք էլ արձակուրդ ստացած աշակերտներ լինէին, ճիշդ այնպիսի չարածըձի աշակերտներ, որպէս մենք։ Ի՞նչ հրաշալի տեսարան։ Մի րոպէ անցնում էր մոքով՝ մերկանալ, ընկնել առուակի սուրբ ու անբիծ ալիքների մէջ և խաղալ նրանց հետ, գլորուել թաւալուելու քշուել յառաջ...

Մայրս ձայն տուեց. վազեցի իւր մօտ։ Ծառը պատրաստ էր. այդ ժամանակ նա ինձ պատմեց թէ ճաշից յետոյ պէտք է գնայինք հօրեղբորորդու տունը, որ նոր ամուսնացած էր. թէ նորահարսին առնելով պէտք է գնայինք

մօտակայ բլրակները ծաղիկներ ժողովելու և վիճակը կազմելու։ Իսկ Համբարձման օրը, ներկայութեամբ ու մասնակցութեամբ բարեկամ և դրացիներին, պէտք է կատարէինք վիճակահանութիւնը։ Նա շատ բան կամեցաւ պատմել, բայց ես խնդրեցի որ ընդհատէ, ցանկալով մնացեալը ինքս իմ աչքով տեսնել։

Մենք խմբովին գնացինք հօրեղբորորդու տունը։ Հիւրերի ու մօտիկ դրացիների ահագին բազմութիւն ժողովուած էր այնտեղ, բոլորն էլ խիստ շքեղ կերպով հագուած։ Իսկ նորահարսը, որ 15-16 տարեկան դեռափթիթ կին էր, իւր երկնագոյն ճոխ հագուստի, բաց վարդագոյն ժապաւէտների ու այլթանկազին գոհարեղէնների մէջ իմ վրայ թողնում էր այն տառապելական հիւրիների տպաւորութիւնը, որոնց մասին այնքան լսել էի հէքիաթների մէջ, որ մի որոշ կարծես մարմնացեալ կերպարանք էին ստացել իմ մանկական երեւակայութեան առաջ։ Չէի յագեցնում նայելով այդ թաւրմ ու մատաղ դէմքին, որին բարեւելու մօտեցայ մեծ երկիւղածութեամբ։ Նա գրկեց ինձ, փոքրիկ վարդագոյն շրթունքից մի վոյգ համբոյր դրոշմեց թշերիս, որ կարծես մարմնացեալ հրեշտակի ջերմ համբոյրներ լինէին։ Ու տուեց ինձ մի փունջ անուշաբոյր վարդ, ասելով.

— Այս փունջը յատուկ քո համար կապեցի և տալիս եմ այն պայմանաւ, որ միշտ մօտս լինիս, ինձից չհեռանաս։ Եւ նրա մեղմ ու քնքոյշ ձայնը կարծես թլուրում էին ամենակատարեալգործուած նուագարանի լարերից, այնքան հեշտալի հնչեց ականջիս։

(Շարունակելի) Ա. Յ. Մ. — ԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Պատրիարք Հայրը տկարութեան պատճառաւ շարժուա Պատրիարքարան չկարենալով իջնել Բաղ. Ժողովը որոշեց որ Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Գաբրիէլ Ծ. վրդպ. Ճէվազիրճեան ինքը բանայ յանուն Ս. Պատրիարքի եկած նամակները, և իւրաքանչիւրը յղէ պատկանեալ ժողովոց կամ Խորհրդոց։

— Բաբեղէն գրուած է ի Պատրիարքարան որպէս զի նոյն վիճակին համար առաջնորդական ընտրութիւն կատարելու մասին հարկ եղած տնօրինութիւնը լինի։

— Կարնոյ Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Ղեոնդ եպիսկոպոս Շիլմանեան՝ մայիս 17ին Թիֆլիսի Վանքի Մայր Եկե-

ղեցոյն մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց, և յետոյ՝ ընկերակցութեամբ վարդապետաց՝ այցելութեան դացեր է Օսմանեան ընդհանուր հիւսպատոս Հասիպ պէյի։

— Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցոյ դիւանը կազմուեցաւ այսպէս. Ղազարոս էֆ. Միքայէլեան՝ Ա. Ատենապետ, Յովսէփ էֆ. Սրմաքէլեան՝ Բ. Ատենապետ, Միհրան էֆ. Կարապետեան՝ Ա. Ատենագպիր, Միքայէլ էֆ. Տէր Թ. Պէնկլեան՝ Բ. Ատենագպիր, Գանձապետ ընտրուեց է Մհի. Մանուկ էֆ. Վարդանեան։

— Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկոպոս վաղը Խաղաղի Ս. Ստեփաննոս եկեղեցոյն մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ՝ ի հանգիստ հոգւոյ Գալֆայեան Որբանոցի պաշտօնեայնէն Քիւլճանճեան Խաչիկ էֆէնտի ծնողաց։ Երկուշաբթի տեղի պիտի ունենայ նոյն էֆէնտին պսակի արարողութիւնը՝ Որբանոցի աշակերտուհիներէն միոյն հետ։

— Ռոտոսթոյի հոգևոր Հովիւ Գեր. Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան չորեքշաբթի օրը Բաղ. Ժողովին ներկայանալով ի Պատրիարքարան, Ռոտոսթոյի երկրագործ դասուն, — որ ժողովրդեան մեծագոյն մասը կը կազմէ, — մարտիրոսէն կրած փառանքուն վրայ տեղեկութիւն հաղորդեց և աւերիչ ճըճիին ջնջման համար կարող մասնագէտներու առաքման պէտքն զգացուց։ Այս նպատակաւ Հմայեակ Սրբազան պատրաստած է մանրամասն տեղեկագիր մը։

Հաւանութեամբ Բաղ. Ժողովոյ, Ն. Գերապատուութիւնն՝ ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործակատար Աբրահամ էֆէնտի, այսօր Ատլիէի պաշտօնատունը պիտի երթայ, Սրբաբութեան գործոց նախարար Վսեմ. Րիզո փաշայի ներկայանալու և վերոյիշեալ տեղեկագիրը մատուցանելու համար։

Այս առթիւ Հմայեակ Սրբազան պիտի խնդրէ նաև որ Ռոտոսթոյի Ս. Խաչ թաղի հրկիզեալ վարժարանին վերաշինութեան հրամանը շնորհուի կայսերական կառավարութեան։

— Տնտեսական Խորհուրդը երեքշաբթի օր զբաղեցաւ մայրաքաղաքիս ընդհանուր Դպրաց դասերու կանոնական և մատակարարութեան, ինչպէս նաև Իւսկիւտարի Ս. Խաչ և Ս. Կարապետ և Սամաթիոյ եկեղեցեաց վերաբերեալ կոտակային և այլ հաշուական խնդիրներով։

— Նոր-Նախիջևանի ազգայիններէն Պ. Ս. Խաչեան որոշեց է իւր հանգուցեալ կնոջ յիշատակին համար տարեկան

320 րուբլի տալ քաղաքին Ս. Հռիփ-սիմեանց օրիորդաց դպրոցին՝ հանգուցեալ կնոջ անունով ութ սանուհի պահելու համար:

— Մոսկուայէն Նոր-Դարին կը գրեն թէ, Սմբատ Շահազիզեանի յորեւեանին առթիւ հիմնուած գրականական դրամադրոյն համար արդէն հաւաքուած է մօտ 6000 րուբլի: Առանձին գրքով պիտի հրատարակուի յորեւեանի նկարագրութիւնը՝ բոլոր ուղեբաներով, հեռագիրներով, նամակներով, ճառերով, բանաստեղծութիւններով, ևլն: Գրքին պիտի կցուին յորեւեանի պատկերը, կենսագրութիւնն և ուրիշ յօդուածներ: Գործին ձեռնամուկ եղած են Պ. Մկրտիչ Խարխուրեան և Ա. Ղեքսանդր Մատուրեան: Յիշեալ գրքի վաճառումէն գոյացած արդիւնքն ալ պիտի յատկացուի գրականական դրամադրոյն:

— Նոր-Դարի մէջ կը կարդամք.

Ղամարլուից. — Արաքս գետի յորդացած ջրերը ողողել են մեր հնադարեան Խոր-Վիրապ վանքի արտերը և ըստ պատմութեան են ողողել նաև յիշեալ վանքապատկան արօտատեղիները: Այս առաջին անգամը չէ, որ Արաքսը ողողում է վանքի կալուածքները. 1887, 88, 89 թուականներին նա ահագին վընասներ տուեց այդ կալուածքներին: Անցեալներում երկու կապալառուները հետ պայման կապուեց վանքապատկան կալուածքների շուրջը պատնէշներ շինելու. ապամանի զօրութեամբ կապալառուները իրաւունք ունէին սերմը վանքից ստանալով արտերը վարել, ցանել, հնձել և այլն և գոյացած արդիւնքը պէտք է բաժանէին վանքի հետ հաւասար կերպով: Եւ ահա 1890 և 91 թուականներին վանքը կերակրուած էր իւր սեպհական բերքերով, որովհետև վարելահողերը Արաքսի հոսանքից պաշտպանուած էին: Այս տարուայ Արաքսի արտերի ողողելը վերագրում են նրան, որ պայմանի զօրութեամբ իւրաքանչիւր գարնան սկիզբն կապալառուները վանքի օգնութեամբ պէտք է նորոգեն պատնէշը, բայց այս տարի չէ նորոգուած:

— Ի Մոզդուկ, սմն Գ. Փրիդոնեանց վախճանելով, անուշիկ չայոց վարժարանաց կտակեր է 1000 րուբլի: Ուրիշ մը, իւր վաղամեակի դստեր Օրիորդ Սիրանոյշ Մեքլումեանի յիշատակին նոյն վարժարանաց նուիրեր է 100 րուբլի: Նաև իրեն օրեգրեր է երկու աշակերտուհիներ:

— Մաղնիսայի Թաղ. Խորհուրդը հրաժարած լինելով, առժամանակեայ Թաղ. Խորհուրդ մը կազմուել է հետեւեալ անձերէն. Տեառք Աւետիս Գալէնտէրեան, Նազարէթ Ներսէսեան, Ղազարոս Հալաճեան, Գեորգ Սէրտարեան, Յակոբ Փափազեան, Հաճի Ղուկաս Փափազեան, Թաղաւոր Գարագաշեան:

— Պատր. Գեր. Փոխանորդ Հայրը վաղն առաւօտ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Պէտլիքոսէրէի եկեղեցւոյն մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի Քրէտի Ֆօնսիէ Պանքային տնօրէն Պ. Քրիսթօֆլ հրաժարեցաւ Երեսփ. Ժողովոյ այն որոշման վրայ որով այն դրամատունէն զատ ուրիշներ ալ պիտի կրնային դրամ փոխ տալ գաւառային սնտուկներուն: Քրէտի Ֆօնսիէ, որուն առանձնաշնորհն եղած էր ցայս վայր այդ կարգի փոխառութիւնները, այսու մեծ կորուստներ պիտի ունենայ: Տնօրէնն՝ իւր հրաժարականով՝ Երեսփ. Ժողովը այդ որոշումէն ետ կեցնել կը միտի: Պանքային բաժնեթղթոց գինը կ'իջնայ հետզհետէ:

— Լոնտօնէն Աւստրալիա դացող Բորդ Տուկլաս չորհնաւը Տաքարի մօտ խրելով ընկղմիլ սկսեր է. թէպէտ իւր բեռն ու ուղեւորներն ուրիշ նաւ մը փոխադրեր, սակայն այն ևս ընկղմելով՝ 100 հազար անգլ. ոսկւոյ չափ կորուստ տեղի ունեցեր է:

— Սիւսի թագաւորը Պէճիսցի իւրաւագէտ Պ. Ժաքմէնի հետ կնքած պայմանագրէն ետ չէ դարձեր, որով Պարոն Ժաքմէն՝ փոխանակ Եգիպտոսի՝ Սիւսի պիտի երթայ, ինչպէս որ գրած էր:

— Ռուսմանիոյ գահաժառանգ Ֆէրտինանտ իշխանը նշանուել է Էտրիպըրկի դքսին դստեր՝ Մարի իշխանուհւոյն հետ:

— Ֆրանսական Ակադեմիոյ համար նոր անդամի ընտրութիւնը կատարուելով անցեալ շաբթու, Զօլա դարձեալ չորսուեցաւ ընտրուիլ, 3 քուէ միայն ստացաւ, մինչդեռ ընտրեալը՝ Պ. Լաֆլա՝ Սորպոնի պատմութեան դասաւանդն՝ 27 քուէ ստացած էր:

— Անգլիական գործակատարն յեգիպտոս՝ Սըր Էվլին Պէրինկ՝ որ Լորտութեան աստիճան ստացաւ, Լորտ Քրամըր պիտի կոչուի այսուհետեւ իւր ծննդավայրին անունով:

— Անգլիոյ Երեսփ. Ժողովը որ մէկ երկու շաբթիէն բոլորովին պիտի լուծուի, յունիս 4էն 9, հինգօրեայ դադար մ'ընաւ:

— Մոսկուայի մէջ մեծ հրդեհ մը ծագելով, 80 տուններ հոյ ճարակ եղեր են:

— Փրզիպրանի արծաթի և կապարի հանքերուն մէջ ծագած հրդեհէն կորուսուած անձանց պաշտօնական թիւն է 193, թէպէտ 400 է կ'ըսուի: 15 օր պէտք է եղեր գիւղերն ամբողջովին հանելու համար և 15 ամիսէն միայն կարելի է եղեր հանքերը շահագործուելու վիճակի մէջ դնել: Եղած վնասը 2 1/2 միլիոն ֆրանկն կը հաշուի:

— Ամերիկայի Միացեալ-Նահանգաց արտաքին գործոց նախարար Պ. Պէյն հրաժարեցաւ՝ նախագահական յառաջիկայ ընտրութեանց թեկնածու հանդիսանալու համար:

— Յունաստանի կառավարութիւնը դարձեալ 90 հազար ոսկւոյ փոխառութիւն մ'ըրեր է յուլիսի կորոնին վճարման համար:

— Յունաստանի ոստիկանութիւնը անցեալ շաբթու ձերբակալեր է մի քանի ծովահններ որք Յանիական ծովուն և

Օսմ. ջուրերուն մէջ ծովահնութիւնի դործ կը դնէին:

— Սուէզի ջրանցքէն անցնող նաւերուն մէջ մի տակառաջափին համար գանձուած տուրքը 50 սանթիմ պիտի զեղչուի 1893ի սկիզբէն:

— Մոսկուայի մէջ պատահած փոթորիկէն մեռնողներուն թիւն է 1200 և վիրաւորները 4300: Լոնտօնի Լորտ քաղաքապետը մարդասիրաբար 72000 ֆրանք նուիրած է արկածեաց:

— Ֆրանսայի Նանսի քաղաքին մէջ կատարելի Համալսարանական տարեգարծին մասնակցելու համար Գ. Բառնոն քաղաքը գացած է: Բարիդէն ի Նանսի ամէնուրեք Ժողովուրդէն եռանդալից ընդունելութիւն գտեր է:

— Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխան իւր ուղեւորութիւնը կը կատարէ Եւրոպիոյ արեւմտեան մասին մէջ. չարթուս Անգլիոյ թագուհւոյն ալ այցելութիւն տուաւ: Նախարարապետ Պ. Սթամպուելի կը շնչի Պուլկարիոյ այլ և այլ գաւառները:

— Նգիպոսի խափին եղբայրը մայիս 19ին Գահիրէն մեկնել է. Եւրոպոյի մէջ պտոյտ մը կատարելէ յետոյ Վիէննա պիտի երթայ իւր կրթութիւնը լրացնելու համար:

— Ռուսիոյ և Գերմանիոյ վեհապետաց տեսակցութիւնը վերջապէս երեքշաբթի օրը կատարուեցաւ ի Քիլ: Ռուսիոյ կայսրը իւր Բեհեայիմ Ասզ զրօսանաւով և Գերմանիոյ կայսրն ալ իւր Հոֆենցոլթերն զրօսանաւով Քիլ հասան միջօրէնէն մէկ ժամ առաջ և մինչև կէս գիշերուան մօտ մնացին անդ: Վիլհէլմ կայսրը գերմանական նաւատորմին ծովակալ անուանեց զԱլէքսանդր կայսր և բաժակ ստարակց նոր Ծովակալին կենաց:

— Յունաստանի Երեսփ. Ժողովոյն բացումը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ առանց բացման արքայական ճառ արտասանուելու:

— Պիզմարի իշխանին որդւոյն՝ Մարկըրիտ Հոյոս կամուսնուցին հետ ամուսնութիւնը հինգշաբթի օր կատարուեցաւ Վիէննայի բողոքական եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան Պիզմարի իշխանին:

— Ֆրանս Եղեմ կայսրը Հունգարիոյ թագաւոր պատկուելուն 25երորդ տարեդարձին առթիւ Պուտա-Բէշթ գնաց երեքշաբթի օր: Զօրեքշաբթի օր շատ չբեղ կերպիւ տօնուել է այս տարեդարձ:

— Էմիլ վաւայի մահը կը ծանուցանեն Չանգիպուրէն եկած հեռագիրը:

— Պուլկարիոյ կառավարութիւնը Վառնա-Ռուսուզ երկաթուղւոյն և նոյն քաղաքաց հեռագրական և թղթատարական վարչութեանց մի քանի Հայ պաշտօնեայները պաշտօնանկ ըրեր է:

— Լոնտօնի Նիւ Օրիէնթըլ Պէնքին Գորբորէշը դրամատուրը սնանկացեր է արծաթի գնոյն անկման պատճառաւ:

— Բեդեսպուրի մէջ հրդեհ մարելու համար հնարուած ամէն տեսակ գիւտերու մասին ցուցահանդէս մը բացուած է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբաշխութիւնք. — Սուրբոյ կուսակալ Օսման փաշա Հիճազի կուսակալ և կայս. աւագ թիկնապահ, Թէվ-Փիք պէյ' Նիկոէի (Գօնիա) կառավարիչ, Պէհաէտօն պէյ' Բեթերսպուրկի օսմ. ընդհանուր հիւսպտոս, Ալի Բիֆաթ էֆէնտի Պանսրմայի, Հիւսնի էֆէնտի Անտիօքի և Մէհմէտ Սալիտ էֆէնտի Ալաշկերտի նախ, Բիֆաթ պէյ' Քէշանի (Կէլիօլու), Փախրէտօնի էֆ. Քէսքիմի (Կարին), Մուսթաֆա Ֆէհմի էֆէնտի Թորթօմի (Կարին), Սալիլ Հիլմի էֆէնտի Պոքքըրի (Գօնիա) և Սալիլ Հիլմի էֆէնտի Պորի (Գօնիա) գայմադամ, Զիննի էֆ. Թորթօմի նախ պանուսնեցան:

Աստիճանք. — Էրթօղլու գաւառին կառավարիչ Փուատ փաշայի՝ Բուճէլի Պէյլէրպէյի, Տիգրանակերտի Խաթէի ժողովոյ անդամ Գալազեան Յովսէփ էֆէնտի և Գօնիայի վաճառականներէն Տէյրիմէնի օլլու Սիմէօնքի էֆէնտի Սանյէի երկրորդ, Հոռովէական Հայոց Պատրիարքարանի քարտուղար Բարաւտի Գրիգոր էֆէնտի Բապի և Օսմ. կայս. Պանքայի Գասթէմուսի գործակալ Յովակիմեան Միհրան էֆէնտի Սամիսէի աստիճանները տրուեցան:

Պատուանգամք. — Պետական խորհրդոյ անդամ՝ Մէհմէտ Փայիք պէյի Օսմանիէ առաջին, Բ. Դրան իրաւագէտ խորհրդականներէն Ճիվանեան Նշան էֆէնտի Մէհմէտի Գ., Օսմ. կայսերական Պանքայի պաշտօնեայններէն Յովհաննէս Թօքատ և Օլլուկեան Անտօն էֆէնտիներու Մէհմէտի Գ., և Մաքսային վերատեսչութեան պահապաններէն Ստեփան էֆէնտի Մէհմէտի Ե. պատուանգանները տրուեցան:

Շնալրամք. — Քարանթինաներու ընդհանուր քննիչ Տօքթ. Բօջօնի էֆէնտի Լիաքաթի ոսկի և Պալոյ ոստիկանապետ Ակեան էֆէնտի Լիաքաթի արծաթ շքադրամները տրուեցան:

— Եւմէնի մէջ օսմանեան բանակաց և Ապիտ ցեղէն ապստամբաց միջեւ պատերազմ մը տեղի ունենալով, յաղթութիւնն օսմանեան քաջարի զօրաց կողմը մնացեր է:

— Իսպական դեսպան Պ. Բէսման որ Փարիզու դեսպան անուանուած է, չորեքշաբթի մեկնեցաւ մայրաքաղաքէս:

— Ամերիկեան նորընտիր ընդհանուր հիւսպտոս Պ. Հէս մայրաքաղաքս ժամանած է:

— Մուսանլիա Պրուսայի երկաթուղւոյ բացումը հինգշաբթի պիտի կատարուի:

— Զմիւռնիոյ մէջ անգղիական Հենրի Էննիկ ածխարար շոգենաւը անգղիական զրահաւորի մը ածուխ յանձնելէ յետոյ երբ ճամբայ կ'ենէր, Բ. նաւապետին մէկ ձախող հրամանին վրայ զրահաւորի ցուակին բաղիսեր և ծակուելով ընկղմելու վտանգին մէջ ծովեղբքը խրեց է:

— Նիկովիդիոյ և Կէմէլիկի շրջակայքը մարախ երեւան ելած լինելով, տեղական կառավարութիւնը պարտք

դրած է բնակչաց վրայ, որպէս զի իւրաքանչիւր անհատ որոշեալ քանակութեամբ մարախ ոչնչացնէ:

— Սելանիկի մէջ արմտեաց երեք մթերանոցներ այրեր են:

— Ամասիոյ մէջ ալ գործարան մը ու տուն մ'այրեր են:

— Հոսէյսայի մէջ հրդեհ ծագելով, 140 տուն և 60 խանութ այրեր են:

— Ապահովութեան սնտուկէն երկու տարի առաջ պակսած 2000 ոսկւոյն համար նախորդ տնօրէն Սիւլէյման Սիւպայի պէյի և նախորդ գանձապետ Փափազեան Յովհաննէս էֆ. դէմ բացուած դատին մէջ նախադատ տտեանը Սիւլէյման պէյը յանցաւոր դատած էր: Արդ, վճռաբեկ տտեանը բեկանելով այդ վճիռը, նոյն իսկ ապահովութեան Սնտուկն ու Առեւտրական նախարարութիւնը պատասխանատու ճանչցած է:

— Պատմական ատեանը չորսական ամիս բանտարկութեան և շորթուած ապրանք ետ դարձուելուն դատապարտած է Քէշեա օլլու Արթին և Սալիկեան Տիգրան անձերը որք ոսկերիչ Զեհուր էֆ. Գալաքճեանէ զոյգ մը օղ և մատանի մը շորթած էին:

— Արեւիկեղազսի Քաշօթ կղզւոյն մէջ մայիս 5ին երկու օր անընդհատ անձրեւ տեղալով, պատեր ու հողակոյտներ փլեր և 1000 ոսկւոյ չափ մնաց եղեր է:

— Նիկոնաղաս տտեանի կողմէ ցրկեան շղթայակապ աշխատութեան դատաւարտուեցան Իսկիւտարցի լուծմայափոխ Եանքօ և փախստական Զաֆիրի, որ ի բացակայութեան դատուած է: Իբր մեղսակից տմբատանուած Թիլիպ անպարտ արձակուած է: Ասոնք վարձու ապրանք տուն մը կահաւորելով ի Գոտըղիւղ, ապահովագրած և ապա կրակի տուած էին:

— Հին տաւաքը նորին հետ համաձայնեցնելու համար համաժողով մը կազմել առաջարկուած է Սերպիոյ մետրապոլիս կողմանէ Յունաց Պատրիարքին:

— Տիգրանակերտի վճռադրոց գործադիր պաշտօնեայ Արթին էֆէնտի որ դատի ենթարկուած էր, անպարտ արձակուելով՝ պաշտօնին մէջ վերահաստատուեց է:

— Խազիկղցի Մանուկն ի Գասթմփաշա սպաննող Ալի անուն սճրագործը ձերբակալուած է:

— Խազիկղցի մակույկ մը շրջելով մէջը գտնուող 6 տնձերէն յոյն մը և հրեայ մը խեղդուեցին:

— Նիկովիդիոյ և Տէրինճէի միջեւ երկաթեայ գծերուն վրայ նախապէս խեղդուած հովուի մը դիակը գտնուեց է: Երկու հովուներ ձերբակալուած են:

— Յիմիլէն, նախորդ Ստիվին խոհանոցէն անցեալները ծագած հրդեհը հրճիգութեան արգիւնք է եղեր: Ապարանքին սպասաւորներէն Զաքար, Սեդրակ, Արթին, Մանուկ և Նշան իբր հրճիգ ձերբակալուելով, տմբատանիչ տտեանին յանձնուեցան:

— Սիմոպի մէջ անցագիր չուսնեալուն համար ձերբակալուած օտարագէին ընդ հսկողութեամբ մայրաքաղաքս բերուեց է:

— Հացի գինը չորեքշաբթի օրուընէ սկսեալ 5 փարայ զեղչուած և փռան հացը 45 ու սիմիսնիներունը 35 փարայ կը ծախուի:

— Զիֆակոյի արուեստահանգիսին զրկուելու համար դեղակերտ դրատուն մը կը շինուի արքունի նաւարանին մէջ:

— Նիկոնաղաս տտեանը 5 տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտեց Ռատսթոյի Մանուկը որ անցեալները ի Պոլիս Բարմաք գարու կեսարացի Կարապետը դաշնոյնով վիրաւորած էր: Նոյն տտեանը 3 տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտեց Թոտօրի անուն մէկը որ Պալք բազար գինեպան Սիմիսթօն վիրաւորած էր:

— Նազանքի կողմերը Գուզլուհնճուքցի Տալիտ Ճաքօն անուն փերեզակը սպաննուած գտնուեց է: Վրայէն 1000 շրուշ ելեր է, զոր չարագործք չեն առած:

— Ասանայի մէջ տեղացած անձրեք երկաթուղւոյ գծերն աւերեր են:

— Միջերկրականի Անգլիական նաւատորմին հրամանատարը՝ ծովակալ Սըր Ճօրճ Թրլոյօն՝ Վէհ. Սուլթանին հրաւիրանօք յունիս 3ին մայրաքաղաքս պիտի գայ իւր Սըրբայդ զբոստնաւով:

— Դասասանլի պիտի ենթարկուին Ատանայի առեւտրական տտեանին նախագահ Պօտոսաքի էֆ., Հալպի Հուգուքի դատարանին նախագահ Մահմուտ պէյ և նախորդ նախն, Մերսինի ընդհանուր դատախազի օգնական Ավրամաքի էֆ. ինչ ինչ զեղծմանց համար:

— Դաւառաց մէջ, ի բաց առեալ պետական և մասնաւորաց տնտաներէն, այլ մասնաւորաց և թափուր դեմքներու վրայ մշակուած գազիի, դիտորի և խողիպղինի բերքերէն տասանորդի տուրքն ըստ օրինի պիտի գանձուի:

— Սկիւսար — Դասըգիւլ ջրի ընկերութեան խողովակները Օրթագիւղի միջանի Հրեայներու կողմէ կը գողցուին և Օրթագիւղ տարուելով դարձեալ կը ձուլուին եղեր գործածուելու համար: Ոստիկանութիւնը երեսուն հանելով այս գողութիւնը, ձերբակալած է գողերը:

— Բարիզու Ժ. Պլոնտէլ և Լ. Կարնիէ սեղանաւորական տունը սնանկանալով, 40,000 ոսկիէն աւելի մնաց պատճառեր է մեր հրապարակին:

— Անասուլի երկաթուղւոյ Ինթօնիւ-Ալքէէյ մասին բացումը յունիս 3ին պիտի կատարուի:

— Պրուսայի պահեստի զօրաց հրամանատար Մուսա Քեազիմ փաշա յանկարծամահ եղեր է:

Ա Ր Ժ Է Գ Դ Ր Ա Մ Ո Ց				
Օսմ. լիւրան 100 զըշ. էն				
Մէհմէտիէ	108	2	Վ. Եննոյ	102 20
Քաւարդ մէհմ	106	20	Բուսիլ Բօլ	89 30
Մանր մէհմ	102		Նաբուէն	87 21
Մէթալիք	97	20	Գրիմից	51 15
Հինգնոյ	101	20	Անգլ. լիւր	110 5
Մանէթ թղթադրամ 8 76				
Դանսլիտէ	22	13	Բուս. երկ.	84 1/2
Թաշլիլ. Օսմ.	82	36	Թաշլիլէ	18

Ի Մ Ա Հ

Սրտակից բարեկամիս

ՈՂԲԱՑԵԱԼՆ

ՄԱՆԿԱՅԻՆ ԷՓ • ՄՈՒՐԱՑԵԱՆ

Արտասուելի մարդկութիւն ,
Ըզեղ ի բոյժ աւերած
Հեազոսեմ աչք ի լաց .
Ունայնութեանդ սամ ողջոյն .

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Ա. փ մը հող , ահա ա՞յս էր կամքդ ,
տուր քեզ զայն . ալ մը հող , սե դա-
գալիդ վրայ : Աս ոտն կոխեցիր հազար
փայտայանք և գգուանք ջերմագութ
հարազատիդ , մատաղ քրոջդ , ազգա-
կանացդ և իմ՝ սրտակցիդ :

Գիտեմ , կը սկսէիր տարիէ մ' ի վեր
այն մահատու թոյնը քու ներսդ , այն
դժոխային բաժակը զոր չարագէտ և
անողոք բաղդին իւր քստմնասարսուռ
մասանց մէջ քեզ նուիրեց

Տառապեցար դու և մեք չարաչար
արտասուեցինք : Արտասուեցինք վիշտդ ,
ինչպէս կ'արտասուենք այսօր մահդ վա-
ղածաման :

Ողորմագին աչերդ մեր երեսն ի վեր
օգնութիւն կը հայցէին , այլ իմ սիրտս
արիւնած , հոգիս վշտամորմաք , չթնեքս
խնդալ կը կեղծէր , աչերս խարուսիկ
ժպիտ մը կ'արձակէր դալկացեալ ու
թալացեալ գիմացդ

Յոյսն , ստապատիր յոյսն կ'օրօրէր
զքեզ , զմեզ իւր կեղծանուշիկ գոգին
մէջ . . . այլ աւա՛ղ , փշրեցաւ ամէն ինչ
դերեզմանիդ եղբւր :

Ջարմանալի շնորհներով զարդարուն
կուրծքիդ ետին անխայտէն ճիւղա-
ցած ախտն , արիւնդ ծծելով ցհուսկ
կաթիլ , քառասունամեայ հասակիդ մէջ
թառամեցուց զքեզ յաւիտեան :

Ո՞ր լեզու , ո՞ր վարդապետութիւն ,
ո՞ր խօսք ապիկար չդառնար միտթա-
րելու սիրաշնորհ կողակցդ , հեռի ան-
կողնոյդ սնարէն , որոյ անունը արտա-
բերելով բազմիցս , տուր վերջին շուն-
չդ , միտթարելու երեք թանկագին
զաւակունքդ , որք չլսեցին վերջին հա-
ռաչդ և զմեզ զամէնն՝ որ մէն մի հե-
ծիւնդ մեր լսելիքներէ կ'իջնէր մինչեւ
ի սիրտս՝ ակոսացնելով , յօշոտելով
կուրծքերնս : Միտթարութիւն . . . ո՛հ ,
թող գոչեմ պաշտելի քերթ ուղահօր հետ :

« Գուցէ՞ հնար արդեօք քեզ պատա-
հել ինձ յերկրի » :

Միտթարութիւնը վշտին ընկեր կար-
գուած է , թէպէտ չէ ցնորք , այլ շատ
հեռի են այսուհետեւ այդ հակապատկեր
զովոյդ , որոյ դանդաղ՝ ընթացքն ,
սպառնցուցիչ՝ հանդիպումը : Սպասէ
մեզ , վայրիկ մը ևս , սիրելի , սակաւիկ

մը , ունայնութեան ծոցը զիրար գըր-
կելու . . . Մեր քայլեր եւս դէպ անդ
ուղղուած ժամէ ժամ քեզ կուգանք ,
ինչպէս դու փութացիր կանուխէն քեզ
և ամէնուս սպասողներու , աղաղակե-
լով մեզ քո շիրմէն :

« Հացի ես զայլ , լա՛ց և դու զիս ,
այլք ըզքեզ » :

Այս ըլլա՛յ տապանագիրդ և յիշա-
տակդ անջինջ :

Ա. ՀԱՄԱՐԳՐԹԱՆ

ԽԱՄԲԱՄ ՎԱՐԳԵՐ

Մէկ պարսէգի մէջ վարդեր
կ'անէին խիստ անխընամ .
Պարսիկացանին չէր դըպեր
Ձեռնն անոնց գէթ մի անգամ :

Վայրի բոյսեր խառն ի խուռն ,
Մահաւ վարդերը խեղդէին .
Մանրիկ խրոլունցն եւ բրբուռն ,
Հոն հաստս բոյն դընէին :

Խեղճ վարդեմիք դեռ բոլոր
իւրեց բերքեր չը բացած՝
Կը հակէին զըլխիկոր ,
Վառ այտերնին տրոգունած :

* *

Քանի՜ քանի՜ վարդ կեանքեր
կանին արդեօք անխընամ .
Պարսիկացանին չէր դըպեր
Ձեռնն անոնց գէթ մի անգամ :

Եւ այդ վարդ վարդ կեանքերուն
Անոյց հոսը չը բուրած՝
Թունաւորիչ որդերուն
Կեր եմ եղած եւ մարած . . .

17 Մայիս 92 ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Մաքրիգիւղ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

Հասարակ Օսմ. Պատմութիւն

Թուրք գրագիտաց մէջ նշանաւոր
տեղ մը գրաւող՝ Բէշատ պէյ էֆէնտի
այս հեղինակութիւնը — որ իւրաքան-
չիւր Սուլթանի գեղեցկատիպ պատկե-
րով զարդարուած է , — պատրաստուած
է ամենապարզ և գիւրահասկանալի ո-
ճով :

Ժամանակէ մը ի վեր Ալգ. վարժա-
րանաց մէջ Օսմ. պատմութեան դասե-
րը թուրքերէն լեզուով աւանդելու
փափագ ու կար թէ և , սակայն յարմար
դասագրքի մը չգոյութիւնը կ'ստիպէր
զգաւաստօսս՝ մեր մայրենի լեզուով դա-
սախօսելու : Բէշատ էֆէնտի աշխա-
տասիրութիւնը կուգայ ահաւասիկ լը-
րացնելու այս պահասը : Գինն է 5 դրշ ,
Դիմել « Մաղիկ » Յանձնակատարու-
թեան Գրասենեկին :

Պ Ա Ր Ո Ւ Ն Ի Կ

Պարոն Գարուն մարտ ծերունի ,
Ժիր եւ կայսառ երես ունի .
Կըրէ նա միտ կանայ հանդերձ ,
Չունի հանգիստ այսու հանդերձ .
Եւ երբ հասնի ամիսն ապրիլ ,
Դաւեսերու մէջ կ'ուզէ ապրիլ .
Յայնժամ գոչէ նա ի ձայն բարձր ,
Ո՛վ իմ գարուն , որչափ ես քաղցր .
Պարոն Գարուն , Պարոն Գարուն ,
Մեր քով կեցիր , զի ես սիրուն :

Տես ցոյն հանգոյն մի մարգարի ,
Փայլի վերայ դալար սրի .
Անտառաց մէջ սոխակ արբուն ,
Երգեն ճրչեն ըզսիւն ի բուն .
Տերեւ բանաւ իւրեանց մուր բան ,
Իսկ այլ բոշոնք ճըռուղեմ անդ .
Տեսնելով ցանգ արեգակին ,
Առաւօտեան փալիւնն անգին .
Պարոն Գարուն , Պարոն Գարուն ,
Մեր քով կեցիր , զի ես սիրուն :

Ահա գարուն ժրպի ուրախ ,
Սիրուն դիմօք զըւարթ խաղաղ .
Իւր բանկոնակ բաւեայ դեղին ,
Խիստ լաւ վայլէ իւր վառ դէմքին .
Լի են ծաղկօք ձեռքեր նորա ,
Չորս կը բողու ուր ուր երբայ .
Եւ կօշիկներն վարդեր պատեն ,
Շըրջապայիլ ուզած ասեն .
Պարոն Գարուն , Պարոն Գարուն ,
Մեր քով կեցիր , զի ես սիրուն :

Թարգ. ԱՐԱՄ Տ. ԹԱԳԻՈՐԵԱՆ(1)

(1) Աշակերտ Միրիճանեան Լեզուա-
բանական վարժարանին : Կը հրատարա-
կեմք իւր այս թարգմանութիւն առ ի
քաջալերութիւն : Ծ . ԽՄԲ .

Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Կազմատուն եւ Թղթավանճառանոց
ի Կեանքիս

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՊԱՇՊԱՋԻՐԿԵԱՆԵԱՆԻ
Հաստատեալ 1877

Հայերէն , Թրքերէն և Ֆրանսերէն
գրքեր և դասագրքեր . — զպրօցական
և գրասենեկի պիտոյք . — այլ եւ այլ
տեսակ թղթեր , և լն , և լն :

Գրատունս արդէն բազմաթիւ հե-
ղինակաց և գրաւաճառաց հետ զանա-
զան պայմաններով ուղղակի յարաբե-
րութեան մէջ լինելով՝ պատրաստ է
գործ ունենալ ամէն Մեծ . հեղինակաց
և գրաւաճառաց հետ՝ որք կը գտնուին
ի Պոլիս և այլուր . ուստի կը հրաւի-
րեմք զնոսա և ամէն գրասէրներ դիմել
գրատունս ուր նորանոր միջոցներ ու-
նիմք ի ձեռին՝ գոհացնելու մեր ամէն
կարգի յաճախորդները ամենաշափաւոր
գներով :

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Մանկավարժական ուսմանը կամ ուսուցչի պատասխանատվան կարեւորութիւնը

Դաստիարակութեան գործն եթէ մինչեւ իսկ լինէր ամենապարզ մեքենայի մը վրայ աշխատիլ՝ զայն կատարելագործելու և այս կամ այն ուղղութեամբ զայն ի գործ մղելու համար, այդ աշխատութիւնն պիտի ենթադրէր ի հարկէ նախնական ծանօթութիւն մը՝ եթէ ոչ մեքենագիտութեան, գէթ այդ մեքենային յօրինուածոյն, անոր մասանց յարակցութեան, փոխադարձ առնչութեան, մէն մի մասանց գերին ու կարեւորութեան, և մեքենագիտական ընդհանուր սկզբանց վրայ։ Այլ և այլ նրբակերտ գործերու կիրարկութեան մէջ ո՛րչափ ալ ճարտար լինի մէկը, մասանց ո՛ր աստիճան ճկունութիւն ևս վայելէ, ո՛րչափ բարձր հանճար ալ ունենայ, դարձեալ այս ամէն առաւելութեամբ անկարող պիտի լինի նա կոյրգիւրդայն կատարելագործել և ի գործ մղել մեքենային՝ մինչեւ որ նախապէս չուսուցնասիրէ անոր յօրինուածը ու մասանց իւրաքանչիւրին այլոց հետ ունեցած յարաբերութիւնն ու պաշտօնը։

Եւ սակայն պարզ մեքենայի մը վրայ չէ որ կ'աշխատի դաստիարակութիւնը։

Դաստիարակութիւնը, կ'ըսէ Թիւլ-Սիմոն, գործ մ'է որով միտք մը կը կազմէ ուրիշ միտք մը, և սիրտ մը կը կազմէ ուրիշ սիրտ մը։ Բայց բոլորովին նոր ի նորոյ չափով կազմուին այդ միտքն ու սիրտը։ անոնց տարերքը գոյութիւն ունին մանկան կուտեան մէջ, եւ այդ տարրական վիճակին մէջ իսկ որչափ աւելի բազմակնճիւռ են անոնք քան մեքենայ մը, որչափ աւելի թագուն ու բազմազան են անոնց գործողութիւնը։ Հետեւաբար, չա՛տ աւելի խորազնին ուսումնասիրութիւն, չա՛տ աւելի ստույգ հաստատուն ծանօթութիւն պարտի ունենալ դաստիարակ մանկավարժն՝ մտաց ու սրտի յօրինուածոյն ու կարողութեանց վրայ և այն օրինաց վրայ որք կը վարեն միտքն ու սիրտը և կը կազմեն զանոնք։

Որովհետեւ այսպիսի ծանրակշիւ խնդրոց մէջ չունիմ հեղինակութիւն, թող ըսածիս վկայեն անվիճելի հեղինակութիւնք։

Դաստիարակութեան գիտութեան մէջ ամենակարեւոր աշխատութիւնը պէտք է լինի ուսումնայն այն ամէն հոգեբանական օրինաց որք ուղակի կամ

անուղղակի յարաբերութիւն ունին իմացական գործունէութեան հետ։

Ա. ՊԵՅՆ

Կրնամք ըսել թէ բարոյական դաստիարակութիւնն է այն դաստիարակութիւն որ կը ներկայացնէ ամենէ մեծ գոյութիւնները։ անոր ձեռնարկելու համար՝ պէտք է նախ խելամուտ լինել այն ծանօթ օրինաց որք կ'ազդեն զգացմանց ու կամաց վրայ։ ՆՈՅՆ.

Եթէ կ'ընդունիք թէ մարդկային միտքն ունի օրէնքներ և թէ ի մանուկըն խմացական բարեշնչութիւնը կը համակերպի այդ օրինաց, կը հետեւի ուրեմն որ դաստիարակութիւնը չէ կարելի վարել առանց այդ օրինաց ծանօթութեան։

Հ. ՍՔԵՆՍԵՐ

Մենէ լաւագոյնները կը կարծեն թէ դաստիարակութեան գործն ուրիշ բան չէ եթէ ոչ մանկան հոգւոյն մէջ սերմանել՝ առանց նախապէս տեղեկի լինելու անոր վիճակին և անոր պիտոյից։ Թէ՛ դաստիարակութիւնը պէտք է բռնի, ինչ որ ալ լինի, մտնէ մանկան հոգեւան մէջ, հարկադրելու համար նմա այնպիսի ֆիզիքական ու բարոյական սովորութիւններ որք միշտ չեն համապատասխաներ անոր խառնուածքին։ Ի մի բան, դաստիարակութիւնը չափազանց կ'աճապարէ՝ կարծելով թէ անսխալական է։ «Ուսի՛ր ճանչնալ սանիկը»։ Եւ ուրեմն մին այն սկզբանց որոց պարտի հետեւիլ դաստիարակը։ Դաստիարակութեան գիտութիւնը սերտիւ կապուած է հետեւաբար մանկան հոգեբանութեան հետ։

Տիկին Բ. ՔԵԼԿՍՏԱՐ

Գործակցիլ բնութեան գործոյն, ընդարձակել զայն, ուղղել զայն երբ թիւրի։ Եւ այս է ահա դաստիարակին գործը։ Կարելի՞ է միթէ գործակցիլ ու է գործոյ՝ ի կիր արկանելով կամայական միջոցներ, առանց նկատելու թէ այդ միջոցք կ'առաջնորդեն թէ ոչ նպատակին որուն պարտի հասնիլ այդ գործ։ Դաստիարակութեան միջոցներն պարտին ուրեմն ճշդիւ համաձայնիլ մանկան զարգացման ընդհանուր օրինաց, որպէս զի դիւրութիւն ընծայեն նմա կանոնաւոր ու արդիւնաւոր կերպիւ հասնելու իւր կուտեան բովանդակ կարողութեան։

Տիկին Բ. ՔԱՐԱՆՆԻԷ

Ահա երկու անգլիացի և երկու Փրանսացի հեղինակներ որք բաւական պերճաբարաւ կը վկայեն թէ՛ իւր գործը դիւրագոյն ու լաւագոյն կատարելու համար, կարեւոր և հարկ իսկ է նախ որ դաստիարակը գիտնայ հոգեբանութեան ընդհանուր օրէնքները, և մասնաւորաբար ուսումնասիրէ մանկան հոգեբանութիւնը մանկան վրայ։

Բայց հոգեբանութիւնը միայն չէ որ

կը կազմէ Մանկավարժութեան ամբողջ հիմունքը։ Եւ հիման անկիւնաքարերէն մին է հոգեբանութիւնը։

Եթէ հոգեբանութիւնը կ'ուսուցանէ թէ ինչ բնազդներ ու կարողութիւններ ունի մարդ, և թէ անոնք ինչ կարգաւ ու աստիճանաւ կը զարգանան, ուղեցոյց մը ևս պէտք է այդ կարողութեանց գործունէութեան համար։

Երբ մեքենայն չունենայ ուղղիչ կամ վարիչ՝ կը գործէ ի դէպ կամ յանդէպ, վտանգաւոր կերպիւ։

Մանկավարժութիւնն, ենթադրեմք, ուսաւ մարդկային հոգւոյ յօրինուածն, անոր յատկութեանց ու գործողութեանց ծանօթացաւ, թափանցեց յօգուածոյ կազմուածոյն մէջ, անոր ամէն կնճիւռները լուծուեցան իրեն համար, ամէն գաղտնիքները պարզուեցան իւր առջեւ։ Բայց դէպ ի ո՛ւր պիտի վարէ զայն։ Եւ կէտը կը պակսի դեռ ու կը մնայ անորոյ։ Ո՛վ պիտի ճշգէ որոշէ այդ նըպատակակէտ։ Բարոյագիտութիւնը։

Այո՛, բարոյագիտութիւնը կը սովորեցունէ թէ ինչպէս գործածելու եմք մեր կարողութիւնները և թէ ինչ պարտիմք ընել։

Ուրեմն բարոյագիտութիւնը պէտք է կազմէ Մանկավարժութեան շինուածոյն երկրորդ անկիւնաքարը։

Հոգեբանութիւն և բարոյագիտութիւն երկու կենդանի աղբիւրներ են որք կը սնուցանեն Մանկավարժութիւնը։ Դաստիարակութեան կանթեղին անսպառելի իւղն են անոնք։

Կայ Հոգեբանութիւն կիրարկեալ ի Մանկավարժութեան և կայ բարոյագիտութիւն նոյնպէս կիրարկեալ ի Մանկավարժութեան։

Եւ դեռ թերի է Մանկավարժութիւնը։

Դասաւանդութեան մէջ ի՞նչ կարգի պէտք է հետեւիլ և ի՞նչ Միջոց պէտք է ընտրել՝ այնպէս որ չեղած չլինիմք Հոգեբանական օրէնքներէ։ Եւ օրինաց կիրարկութիւնն ի՞նչպէս ընելու է՝ մանկան միտքն ու սիրտը կազմելու ատեն, առանց հոս ու հոն թարթափելու, առանց ասդին անդին խախտափելու, միշտ գիտակցութեամբ ու միշտ վստահութեամբ։ Վերջապէս, ի՞նչ Մեթոտ ունենալու է։ Մեթոտաբանութիւնը կ'ամբողջացունէ զՄանկավարժութիւնն։

Կան թէ և ինչ ինչ ուսումներ ալ որք սերտ խնամութիւն ունին լուսամիտ Մանկավարժութեան մը հետ, բայց զանց կ'առնեմ յիշել զանոնք, և իբր ամենէ կարեւորները կը համարիմ Հոգեբանութիւն, Բարոյագիտութիւն, Մեթոտաբանութիւն։

Ո՛չ, ընդհանուր կրթութիւն մը բաւական չէ զմարդ Մանկավարժ ընելու։

Ի սէր մանկութեան, ի յարգանս մեր արժանապատուութեան, աւելի անկեղծ լինիմք: Ճանչնամք մեր թեթեւութիւններն և ուղղեմք:

Պարտիմք հաստատապէս համոզուիլ թէ ուսուցիչ մը, որ թէև այս կամ այն լեզուի, ուսման կամ գիտութեան հըմուտ է, և սակայն չէ մշակած բնաւ վերոյիշեալ երեք նիւթերն որ կը կազմեն զՄանկավարժութիւն, ա՛յդ ուսուցիչ կը թերանայ իւր պարտուց մէջ:

Չեմ՝ ըսեր թէ այդպիսի ուսուցիչ մը գործունէութիւնը կը մնայ բոլորովին ասպարէիւն. այո՛, վարժ ուսուցիչ մը՝ անձնական փորձառութենէ խրատեալ՝ կրնայ փոքր ի շատէ բան սովորիլ իւր արուեստի մասին, և իւր սովորածն յօգուտ իւր սաներուն գործածել. բայց արուեստին տեսական մասը բոլորովին անծանօթ կը մնայ անոր համար: Գործնականն՝ առանձինն անձուկ է, կաշկանդիչ է. տեսականը հնարագէտ կ'ընէ զմարդ, ազատ գործունէութիւն կը շնորհէ:

Մարդոյ կարողութիւնը համեմատական է իւր գիտութեան. որչափ աւելի գիտնայ՝ ա՛յնքան աւելի կ'իշխէ իրաց վրայ: Պատճառի և արդեանց կապակցութեան խելամուտ լինել կարևոր է ամէն բանի մէջ. և ամենէն աւելի կարևոր է նմա որ դժուարագոյն գործն ընելու կոչուած է: Եւ ի՞նչ աւելի դժուարին քան մեր գործ:

Կ'ըսուի թէ խղճմտութեամբ գործելը կը բաւէ մեր պաշտօնին բարեօրէն կատարման. բայց խիղճն ինքնիրե՞ն կը կազմուի, ինքնիրե՞ն կը զարգանայ: Կրնամք ըսել, արդարեւ, թէ խիղճը սաղմնային վիճակի մէջ կայ ի մեզ. բայց, ո՞չ միթէ ուսումն, օրինակն, զգացումներն են, վերջապէս միջավայրն է որ զայն կը կազմեն ու կը զարգացունեն: Աւանդամբ վարժապետի մը ու վարժապետանոցէ ելնող վարժապետի մը խիղճը նոյն են միթէ իրենց պաշտօնավարութեան նկատմամբ:

Քանի՞ քանի՞ ուսուցիչներ տեսած եմ՝ որք եռանդով, խորին խղճմտութեամբ կ'աշխատէին, կը դաստիարակէին, կը յոգնէին չարաչար, յոգնութիւն՝ որ երբեմն հիւանդութեան կը յանգէր. և սակայն արդիւնքն, ո՛չ թէ միայն քանակաւ, այլ և որակաւ, համեմատական չէր լինէր իրենց խղճմտութեան. քանզի զուրկ էին մանկավարժական լոյսէ, սկզբունքէ, զորս դժբաղդաբար թելադրութեամբ չէր սովորեցունէր տանն՝ իրենց խիղճ:

Անտարակոյտ խղճմտութիւնն՝ ըստ կարելոյն կուտայ ճշդութիւն մեր գործունէութեան. բայց այդ ճշդութիւն կը լինի ըստ այն ընդունման զոր

ունիմք մեր պաշտօնի մասին: Եւ մանկավարժական ուսումներն են որ կը ճշդեն մեր ըմբռնումները մեր գործոյն նկատմամբ, կը լուսաւորեն զմեզ, և դիւրին ու արդիւնաւոր կ'ընեն մեր աշխատութիւնը:

Եթէ ընդհանուր կրթութիւն մը, փորձառութիւն, խիղճ, կամայականութիւն բաւէին բարեօրէն դաստիարակութիւն մը աւանդելու, աւելորդ կը լինէին յայնժամ վարժապետանոցերն որք զարգացեալ ամէն ազգաց մէջ հաստատուած են, աւելորդ կը լինէին վարժապետական ժողովներն ու մանկավարժական համախօսութիւններն որք ա՛յնքան եռանդով կը կատարեն ամէն տարի՝ քաղաքակիրթ երկիրներու ուսուցչական մարմինք:

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԻ ՔՄԱՀԱՃՈՅՔ

Մի քանի տարիներ առաջ Աբրա Լիւթ, աշխարհահռչակ դաշնականը Հոովմ կը գտնուէր, բայց դիւրաւ չէր յօժարեր դաշնակ ածել՝ երբ խաղաղական ազնուականութեան սրահներն յաճախէր: Մանկամարդ իշխանուհի մը խիստ կը փափաքէր որ Լիւթ անոր ընկերութեան մէջ չնորձ ընէր իւր տաղանդը ցոյց տալու, ուստի խորամանկ միջոցի մը դիմեց: Իշխանուհին նկատած էր որ ամէն անգամ որ Լիւթ ներկայ կը գըտնուէր ընկերական ժողովասրահի մը մէջ, անոր բարեկամութիւնները մասնաւոր հոգ ունէին դաշնամուրը բաց թողելու՝ որպէս զի հրապուրուի ածելու դաշնակը, և սակայն անկարելի եղած էր իրենց՝ արուեստագիտին մատները նուագարանին գպցնել տալու: Իշխանուհին իւր երեկոյթին կղպեց դաշնամուրը և բանալին դրաւնը դրաւ: Նոյն երեկոյթին Լիւթ աղատած էր դաշնակ ածելու խնդրանաց տաղտուկէն, և բոլոր գիշերն անցաւ առանց իսկ յիշատակութեան մը իւր արուեստի մասին: Այս լուրիւնը կարծես զարմացուց զինքը և սկսաւ արագ արագ ճեմել գոցուած դորժիքին առաջ: Վերջապէս ալ չէր կրնար ծածկել իւր գրգիւրը և անձամբ խնդրեց իշխանուհիէն իրեն տալու դաշնակին բանալին և սկսաւ ածել:


Ա Ր Թ Օ

Ի Ր Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի

ՆՈՒԱԳՆԵՐ

Միգրան Յովհաննէսեան

Գին 100 փարա



ՄՆՏՈՒԿՈՎ ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Անշուշտ կը յիշէք Հերման Յայթուկ Վիեննացին որ խնայողութեամբ ճամբորդելու համար սնտուկի մը մէջ մըտած և Բարիզ գացեր էր: Վերջերս, դարձեալ մի և նոյն միջոցով և շոգեշաւով Քրիստիանիա ժամանել է, ուր 4 օր ու 4 գիշեր սնտուկին մէջ մաքսը մնալ պարտաւորուել է, կծկելու յարմար միջոց մը գտնելու համար: Այս հանճարեղ անկուտին իրեն հետեւողներ ալ ունեցել է: Վիլ քը Մարաքիտո շոգեշաւը որ Մէն-Բոլ-տէ-Լօանտօ (Փորթուկիզեան Ափրիկէ) նաւահանգստին մէջ ապրանք ու ճամբորդ կ'առնէր, լաւ հազուած պարոն մ'ալ կ'ընդունի իբր ուղեւոր իւր փոքր պայուսակներով ու խոշոր սնտուկով: Սնտուկը շատ մեծ ու ծանր էր, այնպէս որ մեծ շոգեգործիով միայն նաւ կրցեր են հանել զայն, և որովհետեւ երեք չորս օրուան տեղ պիտի երթար, նաւուն կամուրջին վրայ ձգեցին այդ սնտուկը: Գիշերը երբ շոգեշաւը խաղաղիկ իւր ճամբան կը շարունակէր, ուղեւոր մը տեսաւ որ սնտուկէն թեւեր դուրս կ'երկարին. սոսկալով սրտաւ կ'սկսի, նաւաստիները կը վազեն և սնտուկը բանալով կը տեսնեն որ մէջը մին գէր ու միւսը նիւար երկու մարդիկ կան՝ յատուկ մասերու մէջ զետեղուած և ամէն տեսակ պաշար ունենալով: Զիրենք ամենէն մօտ Ամպրիչ նաւահանգիստը կը հանեն, ուրիշ դարձեալ նոյն միջոցով Լուալապա անգղիական նաւը նստեր ու վերջապէս մեծ խնայողութեամբ մը Լօանկօ (Ափրիկէ) հասեր են: Վտարուած փորթուկիզ սպայներ լինել կը կարծուին:

ԱՆՅՈՒՍԱԼԻ ԿՏԱԿ ՄԸ

Պարոնայք տը Լա Պուսինիէր՝ Ֆրանսացի երկու եղբայրներ էին, մին՝ հարուստ և միւսը աղքատ, որք բաւական ժամանակէ ի վեր իրարու հետ գժտած էին. բնականաբար պատճառն ալ հարուստին հպարտութիւնն էր: Վերջերս հարուստ տը Լա Պուսինիէրը կը մեռնի, իւր եղբայրը ժառանգութենէ զրկելով և ամբողջ հարստութիւնը իւր քեռորդուց կտակելով: Հետեւաբար իւր աղքատ եղբայրը՝ որ առօրեայ աշխատութեամբն ապրելուն և զաւակներն ալ շատնալուն համար շատ գժուարին կացութեան մը մէջ էր, յոյսը կը կորէ: Բայց քանի մը օր յետոյ իւր եղբոր բնակավայրի կառավարութենէն նամակ մը կ'ընդունի որով զինքը միակ ժառանգորդ ճանչելով եղբորը միլիոններուն, կը հրաւիրէ ստանալ զայնս: Ինչ-

պէս կը գուշակուի, խեղճը՝ խիստ ուրախ՝ նոյն օրն իսկ կը մեկնի հանգերձ ընտանեօք։ Իւր եղբոր դղեակը, կալուածները և ամբողջ հարստութիւնը հետեւեալ օրն իսկ իրեն պաշտօնապէս կը յանձնուին։

Սակայն՝ հազիւ թէ կառավարութեան մարդիկը գուրս ելած էին, և ահա Շարբանթիէ անուամբ անձ մը կը ներկայանայ 6 հազար ֆրանք պահանջելով։ Այդ մարդը հանգուցեալ տը Լա Պուսինիէի Կիւլար նոտարին հետ խօսք մէկ ընելով, ճշմարիտ կտակը մէջ տեղէն անյայտացուցած և Շարբանթիէ նոյն գիրը կեղծելով ուրիշ մը գրած էր, որուն միջոցաւ միայն աղքատ տը Լա Պուսինիէրը այդ հարստութեան տէր եղած էր։ Սակայն խեղճը չհաւատար և գործը կառավարութեան յանձնուելով, ճշմարիտ կտակը երեւան կ'եղէ և մարդը դարձեալ կը ճամբուի այն տունէն որուն մէկ երկու օր միայն կրցած էր տէր լինել։ Նոտարն ու կտակը կեղծողը կալանաւորուած են և հարստութիւնը յանձնուած է հանգուցելոյն քեռորդուոյ։ Արդեօք բան մը պիտի տա՞ն իրենց զրկեալ աղգականին։ Թերեւս։

ԿԱՄԱՆՈՐ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Սուչի և Մերլաթի իտալացիներէն յետոյ, ահաւասիկ Ամերիկացի երիտասարդուհի մը՝ Միս Նելսոն, որ ամիս մը չարունակ ծով պահելու ձեռնարկեց, միմիայն իւր գաղտնարար չինած մէկ ըմպելիէն օրը երկու գաւաթ խմելով։ Միս Նելսոն յաջողեցաւ և անցեալ շաբթու աւարտեց իւր երեսնօրեայ ծովապահութիւնը։ Այս առթիւ ուսումնասիրութիւններ կատարուելով, ապացուցուեցաւ որ ըմպելիքէ զրկուելուն աւելի գէշ ազդեցութիւն ունի։ Բժիշկները երկու շուն փորձի ենթարկեցին։ Մին՝ որուն ո՛չ ջուր կուտային և ո՛չ ուտելիք, 21 օրէն մեռաւ, մինչդեռ միւսը որ կրնար միայն ջուր խմել, մինչեւ 40 օր ապրեցաւ։ Վիթերպի փաստաբանը՝ որ մահուան դատաւարտուած էր, հասարակութեան սուջեւ չմեղցուելու համար, անօթութենէ անձնասպան լինել մոտաբերեց և 17 օրէն մեռաւ։ Իսկ Կիլեոմ Կրանիէ՝ Թուրքի բանտարկեալներէն մին՝ դարձեալ մի և նոյն մոտք անօթութեամբ մեռնիլ ուղեց և միայն ջուր խմելուն համար 73 օր գիւնացաւ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Եղունգներ. — Հետաքրքիրը կը շարունակեն ուսումնասիրել մարդոյ մարմնոյն տարբեր մասերն, գուշակելու համար անձի մը նկարագիրն ու բնաւորութիւնը. ահաւասիկ ինչ որ կ'ըսուի եղունգներու նկատմամբ. երկայն բարակ եղունգներ նշան են երեւակայական կարողութեան, բանաստեղծութեան, արհեստից սիրոյն և ծուլութեան. երկայն և հարթ եղունգներ կը ցուցնեն խոհեմութիւն և մտաւորական լուրջ կարողութիւնք. նա՛ որ ունի կարճ և լայն եղունգներ, կը լինի բարկասիրտ, տմարդի, հակառակող և յամառ. աղէկ գունաւորեալ եղունգներ նշան են պարկեշտութեան, առողջութեան, երջանկութեան, քաջասիրտութեան և առատածեռութեան. կարծր և դիւրաբեկ եղունգներ՝ բարկութեան, անդթութեան, հակառակութեան, կռուոյ և ոճրի. ճիւղաձիւ եղունգներ՝ կեղծաւորութեան և չարութեան. կակուղ եղունգներ՝ փիղիքական և մտաւորական տկարութեան. կարճ և մինչև միսը կըրծուած եղունգներ՝ անխելութեան և անառակութեան։

Կենդանեաց լեզու. — Կենդանեաց լեզուին ուսման համար առ այժմ հիմնական մէթոդը կը պահսին, միայն ֆունկիաթ մը պէտք է. վերջերս հաւելու լեզուին ուսման ևս աշխատիլ ըսկըսած են. միթէ հաւն՝ ի տես յալիշտակիլ թռչնոյ մը՝ մասնաւոր ճիշով իւր ձագուկները անմիջապէս թեւոցը ներքեւ չառնո՞ւր. աքաղաղն՝ իւր հայր ընտանեաց՝ ցորենի հատիկներուն շուրջ չհրաւիրե՞ր ամբողջ իւր ընտանիքը։

Յորենի քանակութիւնը. — Արդի վիճակագրութիւնը կը ցուցնեն թէ մի տարւոյ միջոցին ամբողջ աշխարհի վրայ հնձուած ցորենի քանակութիւնն 800 միլիոն հարիւրաւորէ աւելի չէ, որոյ թէև 480 միլիոնը Եւրոպան կ'արտադրէ, սակայն նոյն ինքն 530 միլիոն հարիւրաւոր ցորեն սպառելով, պակասը Միաց. Նահանգներէն կ'առնու։ Եւրոպայի ցորեն արտադրող երկրաց մէջ առաջինն են Ֆրանսա և Ռուսիա. Ֆրանսա 1890ին 119 միլիոն և 91ին 90 միլիոն, իսկ Ռուսիա 88ին 115 և 91ին 75 միլիոն հարիւրաւոր ցորեն արտադրեց։ Հիւսիսային Ամերիկայի տարեկան արտադրութիւնն է 200 միլիոն հարիւրաւոր. Հնդկաստանինը՝ 90-100 միլիոն։ 1890ին ամբողջ Եւրոպայի արտադրած ցորենի քանակութիւնն էր 464 միլիոն, իսկ 1891ին 400 միլիոն հարիւրաւոր։

Ձմրան ծաղիկները. — Պէտք չէ կարծել թէ ձմրան ծաղիկներ ունենալ մեծամեծ ծախուց կը կարօտի. ահաւասիկ

յարմար և խնայողական միջոց մը. բաւական տաք սենեակ մը բաւ է, այն բոյսի ճիւղերէն, որոյ ծաղիկը կ'ուզեմք ունենալ, պէտք է շեղակի կտրել, և այս ճիւղերը ամանի մը մէջ դնելով, ամանը սենեկին ամենալուսաւոր կողմը զետեղել. ամանին ջուրը պէտք է քիչ մը դաղջ լինի, և այս ջուրը ամէն շաբաթ պէտք է նորոգել. ջրոյ նորոգման պահուն պէտք է ճիւղերը ջրել, ուշադրութիւն ընելով որ ճիւղերը իրենց տեղերէն չշարժին. 3-4 շաբաթ վերջ ծաղկումը տեղի կ'ունենայ, և որ այնչափ աւելի կ'անուրի կը լինի, որչափ որ սենեակը տաք և օդն խոնավութեամբ բեռնաւորեալ լինի։

Երկրագնիս բնակիչք. — Ըստ վերջին վիճակագրութեանց, երկրագնիս վրա բնակող մարդկային ազգի թիւն է 1,479,729,000։ Եւրոպա ունի 357,379,000 բնակիչ. Ասիա ունի 825,954,000, Աֆրիկէ 163,953,000, Ամերիկա 121,713,000 Աւստրալիա 3,230,000, Խաղաղականի կղզիք 7,420,000, Բեւեռային երկիրք 80,000։

Մանրագնեան հսկան. — Միւնիխի բնագիտական և տեսարանական կաճառը աւարտեց շինութիւնն մանրագնի մը որ տրամագիծը 11,000 անգամ մեծցնելու կարողութիւն ունի. այս մանրագնէտ արժած է 43,750 ֆրանք։

Միքոպ եւ պասիլլ. — Առած մը կ'ըսէ. «Արեգական տակ նոր բան չկայ». կ'երեւի թէ շատ ճշմարիտ է այս։ Ամենքս կը հաւատայինք թէ միքոպներու և պասիլլներու գիւտը երէկուան խնդիր մ'է, և սակայն Մէքսիկացի հնագէտ բժիշկ մը, Վ. տը Իրաթէն, թարգմանելով հին Հնդկաստանեաց նշանագրերը (hiéroglyphe), հետեւեալ հատուածը գտած է. «Արմատն և տունին ֆօքօպէհէ, եռայմամբ հիւթն առնուած, կը ջնջէ բոլոր անցեսանցի փոքրիկ կենդանիները (animalcule) որք կրնան ծնունդ առնուլ մարդոյ մարմնոյն մէջ։

Մօն-Պլանի դիսարանը. — Ֆրանսայի երեւելի աստղագէտն Պ. Ժանսսէն, կ'աշխատի որ ժամ յառաջ Մօն-Պլանի ճիշդ գագաթան վրայ գիտարան մը կառուցուի։ Պ. Ժանսսէն ջերմ սիրահար լինելով լեռանց բարձանց, բոլորիցս բարձրացած է շատ լեռանց գագաթները, և այս միջոցաւ մեծապէս նպաստած է գիտական յառաջմտութեանց, նա կը գրէ. «Այս գեղեցիկ առանձնութեանց մէջ, անցուցած եմ գիշերներ, մոռնալով ժամերը՝ ուսման և երկնից սքանչելեաց խորհրդածութեանց մէջ։

Թարգ. ԹԱԹԱՒԻԼ ԲԻԻԲԵԼԵԱՆ

ԱՐՏՈՒԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի-Ջապթի փողոց, թիւ 61

ԼՍՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊՍՏՈՎ ԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԳԼԽՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ
կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէփիսպիք փողոց,
Լիւն (Ֆրանսա)

Ապահովութեան Գրաստան 100,000,000 ֆր.

ԼՍՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատե-
լու համար փոքր խնայողութեանց, ա-
րագ զարգացում մը ունեցած է: Իւր
նպատակն է որոշեալ պայմանաժամի
մէջ վերականգնել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնը
բազմազան է, ինչպէս շարժական ար-
ժէյն և փոխ տրուած գրամագլուխոց ա-
պահովագրութիւն, կորուսեալ գրամա-
գլուխոց մը վերականգնութիւն: Երաշխա-
ւորութիւնը և Գլխավճարք՝ փոխառու-
թեանց և ճարտարութեանց և վաճա-
ռականութեան մէջ գործածուած դը-
րամագլուխոց, մանկանց համար օժիտք,
հանգստեան անուակ ծերութեան հա-
մար, ցեղանոս եկամուտներու կազմու-
թիւն, ի մի բան այն ամէն գործառ-
նութիւնը որոց նպատակն է խնայողու-
թիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակա-
լութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց և բաժանորդա-
գրութեան համար դիմել առ Բարսեղ
Էփէնի թէլեգրամ, գործակալ Ընկե-
րութեան ի. Վ. Պոլիս, Պահճէ-Գարու,
Նէյյա-Բսլամ խան, թիւ 11:

Կ Ա Ր Մ Ի Ր Մ Ա Ն Ա Մ

Գաւառներէն Եմաղիկի Յանձ-
նակատարութեան Գրաստանէն ա-
պագրուած մանածն մինչև ցարդ կը
գնէինք մայրաքաղաքի հրապարա-
կէն: Պատիւ ունինք յայտնելու այ-
ժմ մեր գաւառացի բազմաթիւ
յաճախորդաց ու թղթակցաց որ,
չնորհիւ Եւրոպական առաջնակարգ
գործարանի մը հետ մեր նոր ինո-
րոյ հաստատած յարաբերութեան,
կարող պիտի լինէմք յետ այսորիկ
հայթայթելու կարմիր մանածն յոյժ
գոհացուցիչ գիններով, գնումները
կատարելով ուղղակի արտադրող
գործարանէն և ապրանքի հակերը
Եւրոպայէն ուղղակի ղրկել տալով
ուղուած նաւամատոյցները: Նմոյշ-
ներ և մանրամասն տեղեկութիւն-
ներ կը ղրկուին փափաքողաց. կը
բաւէ ղրկել միայն թղթատարի
ծախքն:

ԳԱՒԱՌԱՑԻՈՅ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Գաւառաց մէջ շատ անգամ կը պատահին այնպիսի դատեր ու գործառնու-
թիւններ որոնք, իրենց բնութեամբ և ըստ օրինի, Պոլիս փոխադրուելով միայն
կրնան շարունակուիլ և իրենց լուծումը գտնել. այս կարգէն են Վառաշինջ Ա-
տենին ներկայանալի դատերը (թէմիզ), օտար հպատակաց հետ պաւառաց մէջ
տեսնուած դատերուն վերաքննութիւնը (իսթիմաֆ), Թէսթիքաթր Շէրի վերաբեր-
եալ դատեր, Ֆէթիլահանէի վերաբերեալ գործեր, և այլն, և այլն:

Գաւառացիք յաճախ պարտաւորուած կը լինին այսպիսի դատերու և գործե-
րու համար ի Պոլիս փոխանորդ մը կարգել իրենց, բայց դիւրութիւն չունենա-
լով ճանչնալու մայրաքաղաքի փաստաբանաց բազմութեան մէջ փաստաշինները ու
ձեռնհասները, հազար դժուարութեանց կը հանդպին, և յաճախ անկարող կամ
անփոյթ մարդոց գործ յանձնելով, վերջ ի վերջոյ կը կորուսանեն իրենց իրա-
ւունքը:

Դատական այս կարգի խնդրոց մէջ գաւառացւոց ծառայութիւն մը մատու-
ցանելու համար, «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրաստանէն կապակցութիւն-
ներ հաստատած է մայրաքաղաքի ամենէն ձեռնհաս փաստաբաններէն մի քա-
նիին հետ: Կը հրաւիրուին այս կարգադրութեան օգտուիլ նոքա որք այդ տե-
սակ գործեր ունին:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԵՐՁ

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ԳՈՒՆԱՒՈՐ ՏԱԽՏԱԿՕԲ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅՈՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Բազմաթիւ ուսուցիչք և վարժարանաց Տնօրէնք սոյն դասագրքին հրատա-
րակութեան փութացումը խնդրած լինելով, կը յայտարարեմք թէ տպագրու-
թիւնն աւարտած է և այս պահուս Պաղտատեան տպարանը կ'ըզդի գրքին մէջ
զետեղուելիք աշխարհացոյց գունաւոր տախտակաց պատրաստութեամբ:

Չանազան վարժարաններէ եղած սովորական խնդրանքներուն գոհացում
տալու համար, սոյն դասագրքի այժմէն իսկ հրապարակ ելած է և յանձնարա-
րութիւնը սկսած են կատարուիլ՝ աշխարհացոյց տախտակներն յետոյ առանձինն
ղրկուելու պայմանաւ. ամէն ոք կարող է գանոնք դասագրքին մէջ ինքնին զե-
տեղել:

Դասագրքի կանխաւ որոշուածէն շատ աւելի ստուար և բազմաձախ եղած
լինելով, առ այժմ պիտի վաճառի ի գին 4 զրչ, իսկ աշխարհացոյցներու տպագրու-
թիւնն աւարտելէ յետոյ 6 զրչ: Մեծաքանակ յանձնարարողներու համար՝ աշխար-
հացոյցներն յետոյ առանձինն պիտի ղրկուին, կը բաւէ որ 2 զրչ տարբերութիւնը
վճարուի:

Դասագրքի օգտակարութեան մասին խօսիլն աւելորդ կը համարեմք, ու-
սուցչաց թողլով գնահատել այն բանաւոր և դիւրութեամբ եղանակն որով աշխար-
հագրութիւնն աւանդուած է այս Դասագրքին մէջ, տպագրութեան, թուղթին,
պատկերներու և աշխարհացոյցներու գեղեցկութիւնն, Օսմանեան Պետութեան
համար տրուած ընդարձակ բաժինը, մանաւանդ այն մասնաւոր պատկերացոյց
տախտակը որուն մէջ յստակօրէն ի տես եկած են ցամաքաց և ջուրց զանազան
ձեւերն, որոց առընթեր գունաւոր գծագրութիւններով ցոյց տրուած են նաեւ
թէ ինչպէս կը գծուին կամ կը ներկայացուին անոնք աշխարհացոյց տախտակ-
ներու վրայ, բան մ'որ բոլորովին նորութիւն է և, գործոյն ուրիշ առաւելու-
թեանցը հետ միանալով, կրնայ այս դասագրքին իւր տեսակին մէջ միակը հան-
գիստցնել:

HOTEL DE PARIS

BUDAPEST, Vazi-koor

Պիւտաբէշթ քաղաքի ամենագլխաւոր կեդրոնի վրայ հաստատուած այս ա-
ռաջնակարգ հիւրանոց ամէն յարմարութիւն ունի ճանապարհորդաց հանգստու-
թեան համար: Խոհանոց եւրոպական և թրքական: Թուրքիացի ճանապարհորդք
այս հիւրանոցը կ'իջեանին: Գիները դիւրամատչելի: